

**Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ
1371/2007 (ԵՀ) կանոնակարգ**

**Երկաթուղային տրանսպորտից օգտվող ուղեւորների իրավունքների եւ
պարտավորությունների մասին**

(Պաշտոնական տեղեկագիր, L 315, 03.12.2007թ., էջեր 0014 - 0041

20071023)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ,
մասնավորապես, դրա 71(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [1],

հաշվի առնելով Տարածաշրջանների կոմիտեի եզրակացությունը [2],

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն եւ
ելնելով Հաշտեցման կոմիտեի կողմից 2007 թվականի հուլիսի 31-ին հաստատված
համատեղ տեքստից [3],

Քանի որ

1) տրանսպորտի ոլորտի ընդհանուր քաղաքականության շրջանակում անհրաժեշտ է
երկաթուղային տրանսպորտից օգտվող ուղեւորների համար ապահովել օգտագործողների
իրավունքները եւ կատարելագործել երկաթուղային տրանսպորտի ուղեւորատար
ծառայությունների որակն ու արդյունավետությունը՝ նպատակ ունենալով խթանելու
երկաթուղային տրանսպորտի մասնաբաժինը տրանսպորտի այլ տեսակների
համեմատությամբ,

2) Հանձնաժողովը «Սպառողների քաղաքականության ռազմավարությունը 2002-2006թ.թ.»
[4] հաղորդագրությամբ նպատակադրված է տրանսպորտի ոլորտում հասնել սպառողների
պաշտպանության բարձր մակարդակի՝ Պայմանագրի 153(2) հոդվածի համաձայն,

3) քանի որ երկաթուղային տրանսպորտից օգտվող ուղեւորը փոխադրման պայմանագրի պասիվ կողմն է, ուստի այդ առումով ուղեւորների իրավունքները պետք է պաշտպանվեն,

4) երկաթուղային տրանսպորտի ծառայություններից օգտվելու օգտագործողների իրավունքները ենթադրում են ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրում ճամփորդությունից թե՛ առաջ եւ թե՛ դրա ժամանակ: Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները եւ տոմսերի վաճառքի գործակալները պետք է հնարավորության դեպքում տրամադրեն այդ տեղեկությունները նախօրոք եւ հնարավորինս շուտ,

5) ճամփորդական տեղեկությունների տրամադրման վերաբերյալ առավել մանրամասն պահանջներ կսահմանվեն Համատեղելիության տեխնիկական մասնագրերում (ՀՏՄ), որոնք նշված են «Ստանդարտ երկաթուղային համակարգի շահագործման համատեղելիության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001 թվականի մարտի 19-ի 2001/16/ԵՀ հրահանգում [5],

6) երկաթուղային տրանսպորտի ուղեւորների իրավունքների ամրապնդումը պետք է հենվի այս ոլորտի վերաբերյալ միջազգային իրավունքի առկա համակարգի վրա, որը նկարագրված է 1980 թվականի մայիսի 9-ի «Երկաթուղով միջազգային փոխադրումների մասին» կոնվենցիային կից՝ «Երկաթուղով ուղեւորների եւ բեռների միջազգային փոխադրումների վերաբերյալ պայմանագրի մասին» Միասնական կանոնների Ա հավելվածում, որը փոփոխվել է 1999 թվականի հունիսի 3-ի «Երկաթուղով միջազգային փոխադրումների մասին» կոնվենցիայում փոփոխություն կատարելու արձանագրությամբ (Արձանագրություն 1999թ.): Այնուամենայնիվ, ցանկալի է ընդլայնել սույն Կանոնակարգի շրջանակը եւ պաշտպանել ոչ միայն միջազգային ուղեւորների, այլեւ պետության ներսում ճամփորդող ուղեւորների շահերը,

7) երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները պետք է համագործակցեն՝ հեշտացնելու համար երկաթուղային տրանսպորտի ուղեւորների փոխադրումը մի օպերատորից մյուսը՝ նրանց տրամադրելով ուղիղ հաղորդակցության գնացքի տոմսեր, եթե դա հնարավոր է,

8) երկաթուղային տրանսպորտի ուղեւորներին տեղեկությունների եւ տոմսերի տրամադրումը պետք է հեշտացվի՝ հարմարեցնելով համակարգչային համակարգերը ընդհանուր ստանդարտ պահանջներին,

9) ճամփորդական տեղեկությունների եւ ամրագրման համակարգերի իրականացման այլ գործողություններ պետք է ՀՏՄ-ների համաձայն իրականացվեն,

10) երկաթուղային տրանսպորտի ուղեւորատար ծառայություններից պետք է կարողանան օգտվել ընդհանուր առմամբ բոլոր քաղաքացիները: Համապատասխանաբար, հաշմանդամություն ունեցող անձինք եւ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձինք, անկախ այն հանգամանքից՝ այդ սահմանափակումը կապված է հաշմանդամության, տարիքի թե այլ գործոնի հետ, պետք է երկաթուղային տրանսպորտով ճանապարհորդելու համար ունենան նույն հնարավորությունները, ինչ մյուս քաղաքացիները: Հաշմանդամություն ունեցող անձինք եւ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձինք ունեն ազատ տեղաշարժի, ազատ ընտրության եւ խտրականության բացառման միեւնույն իրավունքները, ինչպես մյուս քաղաքացիները: Մասնավորապես, հատուկ ուշադրություն պետք է դարձվի հաշմանդամություն ունեցող անձանց եւ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց տեղեկությունների տրամադրմանը՝ կապված երկաթուղային ծառայությունների հասանելիության, շարժակազմից եւ գնացքի հարմարություններից օգտվելու պայմանների հետ: Զգայական խնդիրներ ունեցող ուղեւորներին ուշացումների մասին լավագույնս տեղեկություններ տրամադրելու համար, ըստ անհրաժեշտության, պետք է օգտագործվեն տեսալսողական համակարգեր: Հաշմանդամություն ունեցող անձինք եւ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձինք պետք է առանց լրացուցիչ վճարների հնարավորություն ունենան տոմսերը գնելու գնացքում,

11) երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները եւ կայարանների կառավարիչները պետք է հաշվի առնեն հաշմանդամություն ունեցող անձանց եւ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց կարիքները՝ պահպանելով տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց մասով ՀՏՄ-ները, որոնց նպատակը Համայնքի հանրային գնումների կանոնների համաձայն՝ բոլոր շենքերի եւ շարժակազմերի հասանելի լինելն ապահովելն է՝ ֆիզիկական բնույթի խոչընդոտների եւ հիմնական արգելքների աստիճանական վերացման միջոցով, երբ ձեռք են բերվում նոր ապրանքներ կամ կատարվում են շինարարական, կամ հիմնական վերանորոգման աշխատանքներ,

12) երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները պետք է պարտավորվածություն ունենան ապահովագրվելու կամ ձեռնարկելու համապատասխան միջոցներ՝ կապված պատահարների ժամանակ երկաթուղային տրանսպորտից օգտվող ուղեւորների նկատմամբ

պարտավորությունների հետ: Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների ապահովագրման նվազագույն չափը ենթակա է հետագա քննարկման,

13) ուշացումների, չիրականացված փոխադրման կամ հետաձգման ժամանակ փոխհատուցման եւ օժանդակություն ստանալու իրավունքների ընդլայնումը խթանող գործոն կլինի երկաթուղային տրանսպորտի շուկայի համար՝ ի օգուտ ուղեւորների,

14) ցանկալի է, որ սույն Կանոնակարգով ստեղծվի ուղեւորներին ուշացումների դեպքում փոխհատուցելու համակարգ՝ կապված երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների պարտավորությունների հետ, որը համապատասխանում է ուղեւորների իրավունքների առումով «Երկաթուղով միջազգային փոխադրումների մասին» կոնվենցիայի եւ, մասնավորապես «Երկաթուղով ուղեւորների եւ բեռների միջազգային փոխադրումների վերաբերյալ պայմանագրի մասին» միասնական կանոնների հավելվածում սահմանված միջազգային համակարգին,

15) եթե որեւէ անդամ պետություն երկաթուղային տրանսպորտի կազմակերպություններին ազատում է սույն Կանոնակարգի դրույթների գործողությունից, ապա այն պետք է խրախուսի երկաթուղային տրանսպորտի կազմակերպություններին, ուղեւորներին ներկայացնող կազմակերպությունների հետ խորհրդակցության արդյունքում, միջոցներ ձեռնարկել, որպեսզի փոխհատուցում եւ օժանդակություն տրամադրվի վերջիններիս, երբ երկաթուղային ուղեւորատար ծառայությունների կտրուկ խաթարումներ են տեղի ունենում,

16) ցանկալի է թեթեւացնել պատահարների զոհերի եւ նրանց խնամքի տակ գտնվող անձանց կարճաժամկետ ֆինանսական խնդիրները՝ պատահարին անմիջապես հետետող ժամանակահատվածում,

17) երկաթուղային տրանսպորտի ուղեւորների շահերը պահանջում են, որպեսզի հանրային մարմինների հետ համաձայնության շրջանակում վերջիններս միջոցներ ձեռնարկեն՝ իրենց անձնական անվտանգությունը կայարաններում, ինչպես նաեւ գնացքներում ապահովելու համար,

18) երկաթուղային տրանսպորտից օգտվող ուղեւորները պետք է կարողանան բողոք ներկայացնել երկաթուղային տրանսպորտի ոլորտի ցանկացած կազմակերպություն, որի հետ իրենք գործ են ունեցել, կապված սույն Կանոնակարգով իրենց վերապահվող իրավունքների ու պարտավորությունների հետ եւ պետք է իրավունք ունենան պատասխան ստանալու ողջամիտ ժամկետներում,

19) երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները պետք է սահմանեն, կառավարեն եւ վերահսկեն ծառայությունների որակի ստանդարտները երկաթուղային ուղեւորատար ծառայությունների ոլորտում,

20) սույն Կանոնակարգի բովանդակությունը պետք է վերանայվի՝ կապված սղաճի դրամական չափի փոփոխությունների եւ շուկայի զարգացումների համատեքստում ծառայությունների որակի եւ տեղեկությունների տրամադրման պահանջների հետ, ինչպես նաեւ հաշվի առնելով սույն Կանոնակարգի ներգործությունը ծառայությունների որակի վրա,

21) սույն Կանոնակարգը չի սահմանափակում «Անձնական տվյալների մշակման մասով անհատների պաշտպանության եւ այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24–ի 95/46/ԵՀ հրահանգի [6] գործողությունը,

22) անդամ պետությունները պետք է սահմանեն այնպիսի պատժամիջոցներ, որոնք կկիրառվեն սույն Կանոնակարգի դրույթների խախտման դեպքում, եւ պետք է ապահովեն այդ պատժամիջոցների կիրառումը: Այն պատժամիջոցները, որոնք կարող են ներառել տվյալ անձին տրվող փոխհատուցման վճարը, պետք է լինեն արդյունավետ, համարժեք եւ տարհամոզիչ,

23) քանի որ սույն Կանոնակարգի նպատակը, այն է՝ Համայնքի երկաթուղային տրանսպորտի զարգացումը եւ ուղեւորների իրավունքների ներմուծումը, չի կարող բավարար չափով իրականացվել անդամ պետությունների կողմից եւ, հետեւաբար, կարող է առավել լավ իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ընդունել՝ Պայմանագրի 5–րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով նախատեսվող համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Կանոնակարգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակներն իրագործելու համար,

24) սույն Կանոնակարգի նպատակներից է բարելավել երկաթուղային տրանսպորտի ուղեւորատար ծառայությունները Համայնքի ներսում: Ուստի, անդամ պետությունները պետք է հնարավորություն ունենան արտոնություններ սահմանելու ծայրամասային շրջաններում տրամադրվող ծառայությունների համար, եթե այդ ծառայության զգալի մասը իրականացվում է Համայնքի շրջանակից դուրս,

25) որոշ անդամ պետություններում երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները կարող են դժվարություններ ունենալ սույն Կանոնակարգի դրույթներն ամբողջությամբ

կիրառելու հարցում, երբ կանոնակարգը ուժի մեջ մտնի: Ուստի, անդամ պետությունները պետք է հնարավորություն ունենան սույն Կանոնակարգի դրույթների կիրառությունից ժամանակավոր արտոնություններ տրամադրել երկրի ներսում՝ երկաթուղային տրանսպորտի միջքաղաքային ուղեւորատար ծառայություններ տրամադրելու համար: Այդ ժամանակավոր արտոնությունները, այնուամենայնիվ, չպետք է վերաբերեն սույն Կանոնակարգի այն դրույթներին, որոնց համաձայն, հաշմանդամություն ունեցող անձինք կամ սահմանափակ փոխադրման հնարավորություն ունեցող անձինք իրավունք ունեն օգտվելու երկաթուղով ճամփորդելու իրավունքից: Այդ արտոնությունները չպետք է վերաբերեն նաեւ այն անձանց իրավունքին, որոնք ցանկանում են երկաթուղով ճամփորդելու տոմսեր գնել առանց անհարկի խնդիրների: Այն չպետք է վերաբերի նաեւ ուղեւորների եւ նրանց բեռների հետ կապված երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների պարտավորություններին, կազմակերպության կողմից պատշաճ ապահովագրման պահանջին, այդ կազմակերպությունների կողմից ուղեւորների անձնական անվտանգության պատշաճ ապահովմանը երկաթուղային կայարաններում եւ գնացքների մեջ, ինչպես նաեւ ռիսկերը կառավարելու պահանջին,

26) քաղաքային, ծայրամասային եւ շրջանային երկաթուղային տրանսպորտի ուղեւորատար ծառայություններն իրենց բնույթով տարբեր են միջքաղաքային ծառայություններից: Ուստի, բացառությամբ մի քանի դրույթների, որոնք պետք է կիրառվեն երկաթուղային տրանսպորտի ուղեւորատար ծառայությունների բոլոր տեսակների նկատմամբ ամբողջ Համայնքում, անդամ պետությունները պետք է հնարավորություն ունենան շեղումներ տրամադրելու սույն Կանոնակարգի դրույթների կիրառությունից քաղաքային, ծայրամասային եւ շրջանային երկաթուղային տրանսպորտի ուղեւորատար ծառայություններին,

27) սույն Կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցները պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող՝ Էսթրիդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան [7],

28) մասնավորապես, Հանձնաժողովը պետք է իրավասու լինի ընդունելու կիրարկող ակտեր: Քանի որ այդ ակտերն ընդհանուր բնույթ են կրում եւ նախատեսված են սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու եւ այն նոր, ոչ էական տարրերով լրացնելու համար, ապա դրանք պետք է ընդունվեն թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա հոդվածով

նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորման ընթացակարգի համաձայն,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Կարգավորման առարկան

Սույն Կանոնակարգը սահմանում է կանոններ հետեւյալի վերաբերյալ՝

ա) երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների կողմից տրամադրվող տեղեկություններ, տոմսերի տրամադրում եւ Երկաթուղային տրանսպորտի ամրագրման ու տեղեկատվության համակարգչային համակարգի գործարկում.

բ) երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների պարտավորությունը եւ ուղեւորներին ու նրանց բեռները ապահովագրելու պատասխանատվություն.

գ) ուղեւորների նկատմամբ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների պարտավորություններ՝ ուշացումների դեպքում.

դ) երկաթուղային տրանսպորտով ճանապարհորդող՝ հաշմանդամություն ունեցող անձանց եւ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց տրամադրվող օժանդակություն եւ նրանց պաշտպանություն.

ե) ծառայությունների որակի ստանդարտների սահմանում եւ վերահսկում, ուղեւորների անձնական անվտանգության ռիսկերի կառավարում եւ բողոքներին ընթացք տալը. եւ

զ) կիրարկման վերաբերյալ ընդհանուր կանոններ:

Հոդված 2

Գործողության ոլորտը

1. Սույն Կանոնակարգը կիրառվում է Համայնքի տարածքում երկաթուղային տրանսպորտով իրականացվող բոլոր ուղեւորությունների եւ ծառայությունների նկատմամբ, որոնք իրականացվում են «Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների լիցենզավորման մասին» Խորհրդի 1995 թվականի հունիսի 19-ի 95/18/ԵՀ հրահանգի համաձայն լիցենզավորված՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտի մեկ կամ մի քանի կազմակերպությունների կողմից [8]:
2. Սույն Կանոնակարգը չի կիրառվում լիցենզիա չունեցող երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների եւ տրանսպորտային ծառայությունների նկատմամբ՝ 95/18/ԵՀ հրահանգի համաձայն,:
3. Սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին, 9–րդ, 11–րդ, 12–րդ, 19–րդ, 20(1) եւ 26–րդ հոդվածները կիրառվում են Համայնքի տարածքում գործող երկաթուղային տրանսպորտի ուղեւորատար բոլոր ծառայությունների նկատմամբ:
4. Բացառությամբ 3-րդ պարբերությամբ սահմանված դրույթների՝ անդամ պետությունը կարող է թափանցիկ եւ առանց խտրականության չկիրառել սույն Կանոնակարգի դրույթները ներպետական երկաթուղային տրանսպորտի ուղեւորատար ծառայությունների նկատմամբ հինգ տարին չգերազանցող ժամանակահատվածով, որը կարող է յուրաքանչյուր դեպքում նորացվել երկու անգամ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:
5. Բացառությամբ սույն հոդվածի 3-րդ պարբերության մեջ սահմանված դրույթների՝ անդամ պետությունները կարող են չկիրառել սույն Կանոնակարգի դրույթները քաղաքային, մերձքաղաքային եւ շրջանային երկաթուղային տրանսպորտի ուղեւորատար ծառայությունների նկատմամբ: Քաղաքային, մերձքաղաքային եւ շրջանային երկաթուղային տրանսպորտի ուղեւորատար ծառայությունները տարբերակելու համար անդամ պետությունները կիրառում են «Համայնքի երկաթուղիների զարգացման մասին» Խորհրդի 1991 թվականի հուլիսի 29-ի 91/440/ԵՏՀ հրահանգում [9] նշված սահմանումները: Անդամ պետություններն այդ չափանիշները կիրառելիս հաշվի են առնում հետեւյալ չափորոշիչները՝ հեռավորությունը, ծառայությունների մատուցման հաճախականությունը, ծրագրված կանգառների թիվը, շահագործվող շարժակազմը, տոմսերի առք ու վաճառքի ծրագրերը, պիկ եւ ոչ պիկ ժամերին ծառայություններից օգտվող ուղեւորների թվի տատանումները, գնացքի համարները եւ ժամանակացույցները:

6. Անդամ պետությունները կարող են առավելագույնը հինգ տարի ժամկետով թափանցիկ եւ առանց խտրականության ազատել որոշ ծառայություններ կամ ուղեւորություններ սույն կանոնակարգի դրույթների գործողությունից եւ նորացնել այդ արտոնությունը, որովհետեւ երկաթուղային տրանսպորտի ուղեւորատար ծառայությունների էական մասը կատարվում է Համայնքի տարածքից դուրս, եթե այն ներառում է առնվազն մեկ ծրագրված կանգառ:

7. Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին 4-րդ, 5-րդ եւ 6-րդ պարբերությունների համաձայն տրամադրված արտոնությունների մասին: Հանձնաժողովը համապատասխան գործողություն է նախաձեռնում, եթե նման արտոնությունը չի համապատասխանում սույն հոդվածի դրույթներին: Հանձնաժողովը 2014 թվականի դեկտեմբերի 3-ից ոչ ուշ Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ հաշվետվություն է ներկայացնում 4-րդ, 5-րդ եւ 6-րդ պարբերությունների համաձայն կատարված արտոնությունների մասին:

Հոդված 3

Սահմանումները

Սույն Կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

1. «երկաթուղային տրանսպորտի կազմակերպություն» նշանակում է 2001/14/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածում [10] սահմանված երկաթուղային տրանսպորտի կազմակերպություն կամ որեւէ այլ պետական կամ մասնավոր կազմակերպություն, որը զբաղվում է երկաթուղով ապրանքների եւ (կամ) ուղեւորների տեղափոխմամբ՝ պայմանով, որ տվյալ կազմակերպությունն ապահովի քարշակային ծառայություն. այդ թվում ներառվում են նաեւ այն կազմակերպությունները, որոնք միայն քարշակային ծառայություն են տրամադրում:

2. «փոխադրող» նշանակում է երկաթուղային տրանսպորտի ոլորտի պայմանագրային հիմքով աշխատող կազմակերպություն, որի հետ ուղեւորը կնքել է փոխադրման պայմանագիր կամ այդ պայմանագրի հիմքով պարտականություններ ստանձնած՝ երկաթուղային տրանսպորտի մի շարք իրար հաջորդող կազմակերպություններ.

3. «փոխարինող փոխադրող» նշանակում է երկաթուղային տրանսպորտի կազմակերպություն, որն ուղեւորի հետ փոխադրման պայմանագիր չի կնքել, բայց որին պայմանագրի կողմ հանդիսացող երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունն ամբողջությամբ կամ մասամբ լիազորել է երկաթուղով փոխադրման իրականացումը.

4. «Ենթակառուցվածքի կառավարիչ» նշանակում է որեւէ մարմին կամ կազմակերպություն, որը, մասնավորապես, պատասխանատու է երկաթուղային ենթակառուցվածք, կամ դրա մի մասը հիմնելու եւ շահագործելու համար, ինչպես սահմանված է 91/440/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածով: Սա կարող է ներառել ենթակառուցվածքի վերահսկման եւ անվտանգության համակարգերի կառավարում. ենթակառուցվածքի կառավարչի գործառույթները ցանցում կամ ցանցի մի մասում կարող են բաշխվել տարբեր մարմինների կամ կազմակերպությունների միջեւ.

5. «Երկաթուղային կայարանի կառավարիչ» նշանակում է անդամ պետության ներսում կազմակերպություն, որի վրա դրվել է երկաթուղային կայարանի կառավարման պատասխանատվությունը, եւ որը կարող է լինել ենթակառուցվածքի կառավարիչը.

6. «զբոսաշրջային օպերատոր», նշանակում է 90/314/ԵՏՀ հրահանգի [11] 2(2) եւ (3) հոդվածի իմաստով կազմակերպիչ կամ գործակալ, որը չի կարող լինել երկաթուղային տրանսպորտի կազմակերպություն.

7. «տոմսերի վաճառքի գործակալ» նշանակում է փոխադրման պայմանագրեր կնքող եւ երկաթուղային տրանսպորտի կազմակերպության անունից կամ իր անունից տոմսեր վաճառող՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտի ծառայությունների ցանկացած գործակալ.

8. «փոխադրման մասին պայմանագիր» նշանակում է վարձատրության դիմաց կամ անվճար կատարվող փոխադրման մասին պայմանագիր՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպության կամ տոմսերի վաճառքի գործակալի եւ ուղեւորի միջեւ փոխադրման մեկ կամ մի քանի ծառայությունների մատուցման համար.

9. «ամրագրում» նշանակում է թղթի կամ էլեկտրոնային տարբերակով տրված թույլտվություն, որը լիազորում է փոխադրման անհատական պայմանավորվածություններով նախօրոք հաստատված փոխադրում.

10. «ուղիղ հաղորդակցության գնացքի տոմս» նշանակում է տոմս կամ տոմսեր՝ միմյանց հաջորդող երկաթուղային այնպիսի ծառայությունների փոխադրման պայմանագրեր, որոնք իրականացնում են մեկ կամ մի քանի երկաթուղային տրանսպորտի կազմակերպություններ.

11. «ներպետական երկաթուղային տրանսպորտի ուղեւորատար ծառայություն» նշանակում է երկաթուղային տրանսպորտի ուղեւորատար ծառայություն, որը չի տրամադրվում անդամ պետության սահմանից դուրս.

12. «ուշացում» նշանակում է հրապարակված ժամանակացույցի համաձայն՝ ուղեորի ժամանման ծրագրված ժամանակի եւ նրա փաստացի կամ ակնկալված ժամանման ժամանակի տարբերությունը.

13. «ճամփորդական անցաթուղթ» կամ «սեզոնային տոմս» նշանակում է տոմս անսահմանափակ թվով ուղեորությունների համար, որն իրավասու իրավատիրոջը տրամադրում է երկաթուղային տրանսպորտով սահմանված ժամանակահատվածում ճամփորդության իրավունք որոշակի ուղերթով կամ ցանցով.

14. «Երկաթուղային տրանսպորտի ամրագրման եւ տեղեկատվության համակարգչային համակարգ» (ԵՏՍՏՀՀ) նշանակում է համակարգչային համակարգ, որը պարունակում է տեղեկություններ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների կողմից մատուցվող երկաթուղային տրանսպորտի բոլոր ծառայությունների մասին. ուղեորատար ծառայությունների մասին ԵՏՍՏՀՀ-ում մուտքագրված տեղեկությունները ներառում են տվյալներ հետեւյալի մասին՝

ա) ուղեորատար ծառայությունների չվացուցակներ եւ ժամանակացույցներ.

բ) ուղեորատար ծառայությունների ժամանակ տեղերի հասանելիություն.

գ) վճարներ եւ հատուկ պայմաններ.

դ) հաշմանդամություն ունեցող անձանց եւ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց համար գնացքների հասանելիություն.

ե) ամրագրում կատարելու կամ տոմսեր կամ ուղիղ հաղորդակցության տոմսեր ձեռք բերելու հարմարություն, եթե այդ հարմարությունները կամ դրանց մի մասը հասանելի են օգտագործողների համար.

15. «հաշմանդամություն ունեցող անձ» կամ «տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձ» նշանակում է ցանկացած անձ, ով փոխադրամիջոցից օգտվելիս տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունի՝ պայմանավորված ցանկացած ֆիզիկական արատով (զգայական կամ տեղաշարժման, մշտական կամ ժամանակավոր), մտավոր խախտմամբ, տարիքային կամ անկարողունակության այլ պատճառներով, ինչպես նաեւ այն անձը, ում վիճակը պահանջում է հատուկ ուշադրություն եւ բոլոր ուղեորներին հասու ծառայությունների հարմարեցում այդ անձի կարիքներին.

16. «Փոխադրման ընդհանուր պայմաններ» նշանակում է փոխադրողի պայմանները՝ յուրաքանչյուր անդամ պետությունում օրինականորեն գործող ընդհանուր պայմանների եւ սակագների համաձայն, որոնք փոխադրման պայմանագրի կնքման միջոցով դարձել են այդ պայմանների եւ սակագների մի մասը.

17. «փոխադրամիջոց» նշանակում է մեխանիկական տրանսպորտային միջոց կամ կցորդ, որն օգտագործվում է ուղեւորներ փոխադրելու համար:

ԳԼՈՒԽ II

ՓՈԽԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՈՄՍԵՐ

Հոդված 4

Փոխադրման մասին պայմանագիր

Սույն գլխի դրույթներին համապատասխան, փոխադրման մասին պայմանագրի կնքումը եւ դրա կատարումը, ինչպես նաեւ տեղեկությունների եւ տոմսերի տրամադրումը կարգավորվում է I հավելվածի II բաժնի եւ III բաժնի դրույթների համաձայն:

Հոդված 5

Հեծանիվներ

Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները ուղեւորներին հնարավորություն են տալիս գնացք հեծանիվ բարձրացնել, հարկ եղած դեպքում դրա համար գանձելով վճար, եթե դա հնարավոր է կատարել առանց դժվարությունների, եթե դա բացասաբար չի անդրադառնում երկաթուղային տվյալ ծառայության վրա, եւ եթե շարժակազմը նման հնարավորություններ ունի:

Հոդված 6

Արտոնություններ տրամադրելու բացառում եւ սահմանափակումների սահմանում

1. Սույն Կանոնակարգի համաձայն՝ ուղեւորների առնչությամբ սահմանված պարտականությունները չեն կարող սահմանափակվել կամ այդ պարտականությունները չեն կարող հանվել, մասնավորապես, օրենքից շեղման կամ փոխադրման պայմանագրում սահմանափակող դրույթի ներառման միջոցով:
2. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները կարող են պայմանագրով ուղեւորներին առաջարկել սույն Կանոնակարգում սահմանված պայմաններից առավել նպաստավոր պայմաններ:

Հոդված 7

Ծառայությունների դադարեցման վերաբերյալ տեղեկությունների տրամադրման պարտավորություն

Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները կամ հարկ եղած դեպքում՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտում հանրային ծառայությունները մատուցելու մասին պայմանագրի համար պատասխանատու իրավասու մարմինները, համապատասխան միջոցներով եւ, նախքան դրանց իրականացումը, հրապարակում են ծառայությունները դադարեցնելու մասին որոշումները:

Հոդված 8

Ճամփորդական տեղեկություններ

1. Չսահմանափակելով 10-րդ հոդվածի գործողությունը՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները եւ մեկ կամ մի քանի տնտեսավարող սուբյեկտների անունից փոխադրման պայմանագրեր առաջարկող տոմսերի վաճառքի գործակալները պահանջի դեպքում ուղեւորին տրամադրում են առնվազն II հավելվածի I մասում սահմանված տեղեկությունները երկաթուղային տրանսպորտի ոլորտի համապատասխան կազմակերպության կողմից փոխադրման պայմանագրով առաջարկվող ուղեւորության մասին: Իրենց անունից տրանսպորտային պայմանագրեր առաջարկող տոմսերի վաճառքի

գործակալները եւ գրոսաշրջային օպերատորները տրամադրում են այս տեղեկություններն այն դեպքում, երբ դրանք հասանելի են դառնում:

2. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները ուղեւորին ուղեւորության ընթացքում տրամադրում են առնվազն II հավելվածի II մասում սահմանված տեղեկությունները:

3. 1-ին եւ 2-րդ պարբերություններում նշված տեղեկությունները պետք է տրամադրվեն ամենահարմար ձեւաչափով: Այս առումով հատուկ ուշադրություն պետք է դարձնել տեսալսողական խնդիրներ ունեցող մարդկանց կարիքներին:

Հոդված 9

Տոմսերի, ուղիղ հաղորդակցության տոմսերի հասանելիություն եւ ամրագրումներ

1. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները եւ տոմսերի վաճառքի գործակալներն առաջարկում են տոմսեր, ուղիղ հաղորդակցության տոմսեր եւ ամրագրումներ, եթե դրանք հասանելի են:

2. Չսահմանափակելով 4-րդ պարբերության գործողությունը՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները ուղեւորներին տրամադրում են տոմսեր առնվազն վաճառքի հետեւյալ կետերի միջոցով՝

ա) տոմսերի վաճառքի գրասենյակներ եւ տերմինալներ.

բ) հեռախոս, համացանց կամ լայն տարածում ունեցող այլ տեղեկատվական տեխնոլոգիա.

գ) գնացքում:

3. Չսահմանափակելով 4-րդ պարբերության գործողությունը՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները հանրային ծառայությունների պայմանագրերի համաձայն, ծառայությունների տոմսեր տրամադրում են առնվազն վաճառքի հետեւյալ կետերի միջոցով՝

ա) տոմսերի վաճառքի գրասենյակներ եւ տերմինալներ.

բ) գնացքում:

4. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպություններն ապահովում են համապատասխան ծառայության համար տոմս ձեռք բերելու հնարավորությունը գնացքում, եթե դա չի սահմանափակվում կամ արգելվում անվտանգության նկատառումներով, կամ

կեղծարարության դեմ պայքարի քաղաքականությամբ, կամ տոմսերի պարտադիր ամրագրմամբ կամ այլ ողջամիտ առետարային հիմնավորումներով:

5. Եթե մեկնման կայարանում չկա տոմսերի վաճառքի գրասենյակ կամ տերմինալ, ապա ուղեւորներին կայարանում տեղեկացնում են՝

ա) հեռախոսով կամ համացանցով, կամ գնացքի վրա տոմս գնելու հնարավորության մասին եւ նման գնում կատարելու ընթացակարգի մասին.

բ) մոտակա երկաթուղային կայարանի կամ այն վայրի մասին, որտեղ կան տոմսերի վաճառքի գրասենյակներ եւ (կամ) տեմինալներ:

Հոդված 10

Ճամփորդական տեղեկություններ եւ ամրագրման համակարգեր

1. Սույն Կանոնակարգում նշված տեղեկություններ եւ տոմսեր տրամադրելու համար երկաթուղային տրանսպորտի կազմակերպություններն ու տոմսերի վաճառքի գործակալներն օգտվում են ԵՏՍՏՀՀ-ից, որը հաստատվում է սույն հոդվածում նշված ընթացակարգերի համաձայն:

2. Սույն Կանոնակարգի նպատակներով կիրառվում են 2001/16/ԵՀ հրահանգում նշված՝ Համատեղելիության տեխնիկական մասնագրերը (ՀՏՄ):

3. Հանձնաժողովը Երկաթգծի եվրոպական գործակալության (ԵԵԳ) կողմից ներկայացված առաջարկի հիման վրա ընդունում է ուղեւորների համար մշակված հեռահաղորդակցության եւ տեղեկատվության ծրագրերի Համատեղելիության տեխնիկական մասնագիրը մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 3-ը: ՀՏՄ-ի միջոցով պետք է հնարավոր լինի տրամադրել տեղեկություններ, որոնք սահմանված են II հավելվածում, ինչպես նաեւ տրամադրել տոմսեր, որը կարգավորվում է սույն Կանոնակարգով:

4. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպություններն ընդունում են իրենց ԵՏՍՏՀՀ-ն ՀՏՄ-ում սահմանված պահանջների համաձայն՝ ելնելով տվյալ ՀՏՄ-ում սահմանված շահագործման պլանից:

5. 95/46/ԵՀ հրահանգի դրույթների համաձայն՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները կամ տոմսերի վաճառքի գործակալներն իրավունք չունեն հրապարակելու ուղերթների անհատական պատվերների մասին անձնական

տեղեկություններ երկաթուղային տրանսպորտի այլ կազմակերպությունների եւ (կամ) տոմսերի վաճառքի գործակալներին:

ԳԼՈՒԽ III

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՒՂԵԲԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հոդված 11

Ուղեւորների եւ նրանց ուղեբեռների համար պատասխանատվություն

Սույն գլխի դրույթների համաձայն եւ չսահմանափակելով ուղեւորներին վնասի համար այլ փոխհատուցում նախատեսող՝ գործող ազգային իրավունքի գործողությունը՝ ուղեւորների եւ նրանց ուղեբեռների համար երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների պատասխանատվությունը կարգավորվում է I հավելվածի IV, IV եւ VII բաժինների I, III գլուխներով:

Հոդված 12

Ապահովագրություն

1. 95/18/ԵՀ հրահանգի 9-րդ հոդվածում սահմանված պարտավորությունը՝ պայմանավորված ուղեւորների համար պատասխանատվությամբ, մեկնաբանվում է որպես պահանջ այն մասին, որ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունը պետք է պատշաճ կարգով ապահովագրված լինի կամ ձեռք բերի համարժեք պայմանավորվածություններ՝ սույն Կանոնակարգի համաձայն իր պարտավորությունները կատարելու համար:

2. Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ ներկայացնում է հաշվետվություն՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների կողմից նվազագույն ապահովագրման չափի սահմանման մասին մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 3-ը: Հարկ եղած դեպքում այդ հաշվետվությանը կից ներկայացվում են համապատասխան առաջարկներ կամ դիտողություններ այս հարցի շուրջ:

Հոդված 13

Նախնական վճարումներ

1. Եթե ուղեւորը մահանում կամ վիրավորվում է, ապա I հավելվածի 26(5) հոդվածում նշված երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունն առանց հապաղման ցանկացած դեպքում եւ ոչ ուշ, քան փոխհատուցման ենթակա ֆիզիկական անձի ինքնության բացահայտումից տասնհինգ օր հետո կատարում է նախնական վճարումներ այն չափով, որն անհրաժեշտ է՝ առաջնահերթ ֆինանսական կարիքները հոգալու համար, որը պետք է համամասնական լինի վնասին:
2. Չսահմանափակելով 1-ին պարբերության գործողությունը՝ նախնական վճարումը մահվան դեպքում չպետք է 21 000 եվրոյից պակաս լինի մեկ ուղեւորի համար:
3. Նախնական վճարումը չի համարվում պարտավորության կատարում եւ կարող է հաշվարկվել սույն Կանոնակարգի համաձայն հետագայում կատարված վճարումների մեջ, սակայն այն ենթակա չէ վերադարձման, բացառությամբ եթե վնասը հասցվել է ուղեւորի անփութության կամ սխալի հետեւանքով կամ եթե այն անձը, որն ստացել է նախնական վճարումը, այն անձը չէ, որն իրավունք ուներ փոխհատուցում ստանալու :

Հոդված 14

Պարտավորության վիճարկում

Եթե նույնիսկ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունը վիճարկում է ֆիզիկական վնասի համար իր պարտավորությունն ուղեւորի նկատմամբ, ում ինքը փոխադրում է, այն պետք է ողջամիտ բոլոր ջանքերը գործադրի, որպեսզի օգնի ուղեւորին, որ նա վնասի փոխհատուցում պահանջի երրորդ կողմերից:

ԳԼՈՒԽ IV

ՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ, ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ ԳՆԱՑՔ ԵՎ ՈՒՂԵՐԹԻ ՀԵՏԱԶԳՈՒՄ

Հոդված 15

Ուշացումների, բաց թողնված գնացքի եւ հետաձգումների համար պատասխանատվություն

Սույն գլխի դրույթների համաձայն՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպության պարտավորությունը՝ կապված ուշացումների, բաց թողնված գնացքի եւ հետաձգումների հետ, կարգավորվում է I հավելվածի IV բաժնի II գլխով:

Հոդված 16

Հետվճարում եւ երթուղու փոխում

Եթե հիմքեր կան ակնկալելու, որ փոխադրման պայմանագրի համաձայն, վերջնական նպատակակետ ժամանման ուշացումը 60 րոպեից շատ կլինի, ապա ուղեւորը անմիջապես պետք է հնարավորություն ունենա կատարելու հետեւյալ ընտրություններից որեւէ մեկը՝

- ա) հետ ստանալ տոմսի լրիվ արժեքը ուղեւորության չիրականացված հատվածի եւ այն հատվածի կամ հատվածների համար, որն իրականացվել է, բայց ուղեւորությունն այլեւս իր նպատակին չի ծառայում՝ ելնելով ուղեւորի սկզբնական ճամփորդական ծրագրից: Հարկ եղած դեպքում, հնարավորինս շուտ հետ է վճարվում նաեւ դեպի մեկնման առաջին կետ վերադարձի ծառայության վճարը: Հետվճարումը կատարվում է նույն պայմանների համաձայն, ինչպես կատարվում է 17-րդ հոդվածում նշված փոխհատուցման վճարումը. կամ
- բ) հնարավորինս շուտ շարունակել ճանապարհը կամ փոխել երթուղին նմանատիպ փոխադրման պայմանների համաձայն դեպի վերջնական նպատակավայր. կամ
- գ) շարունակել ճանապարհը կամ փոխել երթուղին նմանատիպ փոխադրման պայմանների համաձայն դեպի վերջնական նպատակավայր ավելի ուշ՝ ըստ ուղեւորի հարմարության:

Տոմսի գնի փոխհատուցում

1. Պահպանելով փոխադրման իրավունքը՝ ուղեորը կարող է երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունից փոխհատուցում պահանջել ուշացումների համար, եթե նա տոմսի վրա նշված մեկնման վայրից ժամանման վայր ուշացել է, եւ եթե այդ տոմսի համար հետվճարում չի կատարվել՝ 16-րդ հոդվածի համաձայն: Ուշացումների համար տրամադրվում է փոխհատուցում՝ նվազագույնը հետեւյալ չափով՝

ա) տոմսի գնի 25 %-ը՝ 60-119 րոպե ուշացման համար.

բ) տոմսի գնի 50 %-ը՝ 120 րոպե կամ ավելի ուշացման համար:

Այն ուղեորները, որոնք ունեն ճամփորդական անցաթուղթ կամ սեզոնային տոմս եւ որոնք այդ տոմսերի վավերության ժամկետի ընթացքում հանդիպում են կրկնվող ուշացումների կամ հետաձգումների, կարող են պատշաճ փոխհատուցում պահանջել՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպության փոխհատուցման պայմանավորվածությունների համաձայն: Այդ պայմանավորվածություններում պետք է նշվի ուշացումը սահմանելու եւ փոխհատուցումը հաշվարկելու չափորոշիչները:

Ուշացման փոխհատուցումը հաշվարկվում է այն գնի հարաբերությամբ, որն ուղեորը փաստացիորեն վճարել է ուշացած ծառայության համար:

Եթե փոխադրման պայմանագրով նախատեսվում է վերադարձի ուղեորություն, ուշացման փոխհատուցումը դեպի եւ հետադարձ հատվածների համար հաշվարկվում է տոմսի վճարված գնի կեսի հարաբերությամբ: Նույն ձեւով ուղեորության մի քանի հաջորդական հատվածներով երթեւեկելու իրավունք տվող՝ որեւէ այլ փոխադրման պայմանագրի համաձայն տրամադրվող ուշացած ծառայության գինը հաշվարկվում է գնի լրիվ արժեքի հարաբերությամբ:

Ուշացման ժամանակահատվածի հաշվարկման ժամանակ հաշվի չի առնվում որեւէ ուշացում, որը երկաթուղային տրանսպորտի կազմակերպության հիմնավորմամբ, տեղի է ունեցել «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրի կիրառության տարածքից դուրս:

2. Տոմսի գնի փոխհատուցումը վճարվում է փոխհատուցման մասին դիմումը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում: Փոխհատուցում կարող է վճարվել

վաուչերներով եւ (կամ) այլ ծառայությունների միջոցով, եթե պայմանները ճկուն են (մասնավորապես, կապված վավերության ժամկետի եւ ժամանման վայրի հետ): Ուղեորի պահանջով փոխհատուցումը վճարվում է դրամով:

3. Տոմսի գնի փոխհատուցումը չի նվազեցվում ֆինանսական գործարքների ծախսերի, ինչպես, օրինակ՝ վճարումների, հեռախոսավճարների կամ դրոշմանիշների համար կատարված ծախսերի հիմքով: Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները կարող են սահմանել նվազագույն շեմ, որից ցածր լինելու դեպքում փոխհատուցման վճարումները չեն կատարվում: Այդ շեմը չպետք է գերազանցի 4 եվրոն:

4. Ուղեորը փոխհատուցման իրավունք չունի, եթե նրան տեղեկացրել են ուշացման մասին նախքան տոմս գնելը, կամ եթե ուշացումը, որը կատարվել է այլ ծառայությամբ ճանապարհը շարունակելու կամ երթուղին փոխելու հետեւանքով, 60 րոպեից պակաս է:

Հոդված 18

Օժանդակություն

1. Եթե ուշացում է տեղի ունեցել ժամանման կամ մեկնման ժամանակ, երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները կամ տոմսերի վաճառքի գործակալներն ուղեւորներին տեղեկացնում են իրավիճակի եւ մեկնման ու ժամանման ակնկալվող ժամանակի մասին, հենց որ նման տեղեկություններ հասանելի են դառնում:

2. Եթե տեղի է ունեցել 1-ին պարբերության մեջ նշված ուշացումը, որը գերազանցում է 60 րոպեն, ուղեւորներին նաեւ անվճար տրամադրվում են՝

ա) ուտելիք եւ զովացուցիչ ըմպելիքներ՝ սպասման ժամանակի համար բավարար չափով, եթե դրանք կան գնացքում կամ երկաթուղային կայարանում կամ հնարավոր է ձեռք բերել դրանք.

բ) հյուրանոց կամ այլ կացարան եւ երկաթուղային կայարանից մինչեւ կացարանի վայրը տրանսպորտի միջոց, եթե անհրաժեշտ է մնալ մեկ կամ մի քանի գիշերներից ավելի կամ անհրաժեշտություն է առաջանում մնալ ավելի շատ, եթե եւ երբ դա ֆիզիկապես հնարավոր է.

զ) եթե գնացքն արգելանքի է հանդիպում ճանապարհին՝ գնացքից մինչեւ երկաթուղային կայարան, մեկ այլ մեկնման կետ կամ ծառայության վերջնական նպատակակետ, եթե եւ երբ դա ֆիզիկապես հնարավոր է:

3. Եթե այլեւս հնարավոր չէ տրամադրել երկաթուղային ծառայություն, ապա երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները հնարավորինս շուտ ուղեւորների համար կազմակերպում են այլընտրանքային տրանսպորտային ծառայություններ:

4. Ուղեւորի խնդրանքով երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները տոմսի վրա ամրագրում են, որ երկաթուղային ծառայության ժամանակ տեղի է ունեցել ուշացում, որի հետեւանքով ուղեւորն ուշացել է գնացքից կամ այդ ծառայությունը հետաձգվել է՝ ըստ առանձին դեպքերի:

5. 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերությունները կիրառելիս՝ երկաթուղային տրանսպորտի շահագործող կազմակերպությունը հատուկ ուշադրություն է դարձնում հաշմանդամություն ունեցող անձանց եւ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց ու նրանց ուղեկցող անձանց կարիքներին:

ԳԼՈՒԽ V

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ ԵՎ ՏԵՂԱՇԱՐԺՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

Հոդված 19

Փոխադրման իրավունք

1. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները եւ երկաթուղային կայարանի կառավարիչները, հաշմանդամ անձանց եւ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց հարցերով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ, հաստատում են հաշմանդամություն ունեցող անձանց եւ տեղափոխման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց փոխադրման հասանելիության ոչ խտրական կանոններ կամ պետք է ունենան նման կանոններ:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց եւ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց համար ամրագրումը կատարվում եւ տոմսերը

տրամադրվում են առանց լրացուցիչ վճարների: Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունը, տոմսերի վաճառքի գործակալը կամ զբոսաշրջային օպերատորն իրավունք չունի հրաժարվելու ամրագրում կատարել կամ տոմս տրամադրել հաշմանդամություն ունեցող անձին կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձին կամ պահանջել, որպեսզի այդ անձին ուղեկցի մեկ այլ անձ՝ բացառությամբ, եթե դա խիստ անհրաժեշտ է՝ 1-ին պարբերության մեջ նշված հասանելիության կանոնները պահպանելու համար:

Հոդված 20

Հաշմանդամություն ունեցող անձանց եւ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց տեղեկությունների տրամադրում

1. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունը, տոմսերի վաճառքի գործակալը կամ զբոսաշրջային օպերատորը հաշմանդամություն ունեցող անձանց կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց պահանջի դեպքում տրամադրում է տեղեկություններ երկաթուղային ծառայությունների հասանելիության եւ շարժակազմի հասանելիության պայմանների մասին՝ 19(1) հոդվածում նշված հասանելիության կանոնների համաձայն, ինչպես նաեւ տեղեկացնում է հաշմանդամություն ունեցող անձանց կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց գնացքի մեջ առկա հարմարությունների մասին:

2. Եթե երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունը, տոմսերի վաճառքի գործակալը եւ (կամ) զբոսաշրջային օպերատորը կիրառում են 19(2) հոդվածում սահմանված շեղումը, ապա նրանք պահանջի դեպքում տեղեկացնում են հաշմանդամություն ունեցող տվյալ անձին կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձին իրենց գործողությունների պատճառների մասին՝ ամրագրում կատարելը կամ տոմսեր տրամադրելը մերժելուց կամ ուղեկցող անձ պահանջելուց հետո հինգ աշխատանքային օրերի ընթացքում:

Հոդված 21

Հասանելիություն

1. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները եւ երկաթուղային կայարանի կառավարիչները տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց վերաբերյալ ՀՏՄ-ի պահպանման միջոցով ապահովում են, որ կայարանները, հարթակները, շարժակազմը եւ այլ հարմարություններ հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց:
2. Եթե գնացքի վրա կամ երկաթուղային կայարանում չկա ուղեկցող անձնակազմ, ապա երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները եւ երկաթուղային կայարանի կառավարիչները պետք է գործադրեն հնարավոր բոլոր ջանքերը՝ հաշմանդամություն ունեցող անձանց կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց երկաթուղով ճանապարհորդելու հնարավորություն տրամադրելու համար:

Հոդված 22

Երկաթուղային կայարաններում օժանդակություն

1. Երբ հաշմանդամություն ունեցող անձը կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձը մեկնում, տարանցիկ փոխադրվում կամ ժամանում է աշխատող անձնակազմ ունեցող երկաթուղային կայարան, ապա երկաթուղային կայարանի կառավարիչն անվճար տրամադրում է այնպիսի օժանդակություն, որ տվյալ անձն ի վիճակի լինի բարձրանալ գնացք կամ իջնել գնացքից, որի համար նա տոմս է գնել՝ չսահմանափակելով 19(1) հոդվածում նշված հասանելիության կանոնները:
2. Անդամ պետությունները կարող են տրամադրել 1-ին պարբերությունից շեղման իրավունք Համայնքի իրավունքի համաձայն կնքված հանրային ծառայության պայմանագրի առարկա հանդիսացող ծառայություններով ճամփորդող անձանց դեպքում՝ պայմանով, որ իրավասու մարմինն ապահովի այլընտրանքային հարմարություններ կամ այնպիսի միջոցառումներ, որոնք կերաշխավորեն տրանսպորտային ծառայությունների հասանելիության համարժեք կամ ավելի բարձր մակարդակ:
3. Եթե կայարաններում աշխատող անձնակազմ չկա, ապա երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները եւ երկաթուղային կայարանի կառավարիչներն ապահովում են, որ 19(1) հոդվածում նշված հասանելիության կանոնների համաձայն, հեշտ հասանելի

եղանակով տեղեկություններ ցուցադրվեն մոտակա երկաթուղային կայարանի մասին, որտեղ կա աշխատող անձնակազմ եւ տեղեկություններ հաշմանդամություն ունեցող անձանց կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց անմիջական օժանդակության մասին:

Հոդված 23

Օժանդակություն գնացքում

Չսահմանափակելով 19(1) հոդվածում նշված հասանելիության կանոնները՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները հաշմանդամություն ունեցող անձանց կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց անվճար օժանդակություն են տրամադրում գնացքում, գնացք բարձրանալիս կամ գնացքից իջնելիս:

Սույն հոդվածի իմաստով՝ գնացքում օժանդակությունը ներառում է հնարավոր բոլոր ջանքերի գործադրում, որպեսզի գնացքում հաշմանդամություն ունեցող անձինք կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձինք այլ ուղեւորների հետ համեմատությամբ կարողանան օգտվել միեւնույն ծառայություններից, եթե անձի հաշմանդամությունը կամ տեղաշարժման սահմանափակ կարողությունը հնարավորություն չի տալիս նրան օգտվելու այդ ծառայություններից առանց օժանդակության եւ ապահով եղանակով:

Հոդված 24

Օժանդակության տրամադրման պայմաններ

Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները, երկաթուղային կայարանի կառավարիչները եւ զբոսաշրջային օպերատորները համագործակցում են հաշմանդամություն ունեցող անձանց կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց օժանդակություն տրամադրելու համար՝ 22-րդ եւ 23-րդ հոդվածներին համապատասխան, եւ պահպանելով հետեւյալ կետերը՝

ա) օժանդակություն տրամադրվում է՝ պայմանով, որ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունը, երկաթուղային կայարանի կառավարիչը, տոմսերի վաճառքի գործակալը կամ զբոսաշրջային օպերատորը, որից գնվել է տոմսը, տեղեկացվել են, որ անձը կարիք ունի օժանդակություն ստանալու՝ այդ օժանդակության ստացման անհրաժեշտությունից 48 ժամ առաջ: Եթե նույն տոմսով կարելի է կատարել մի քանի

ուղեւորություններ, բավարար է կատարել մեկ ծանուցում՝ պայմանով, որ պատշաճ տեղեկություն տրվի հետագա ուղեւորությունների ժամանակի մասին.

բ) երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները, երկաթուղային կայարանի կառավարիչները, տոմսերի վաճառքի գործակալները եւ զբոսաշրջային օպերատորները ձեռնարկում են այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ ծանուցումներ ստանալու համար.

գ) եթե ա) կետի համաձայն ծանուցում չի կատարվում, ապա երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունը եւ երկաթուղային կայարանի կառավարիչը բոլոր ջանքերը ներդնում են, որպեսզի օժանդակություն տրամադրեն այնպես, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձի կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձի համար ստեղծվի ճամփորդելու հնարավորություն.

դ) չսահմանափակելով այլ կազմակերպությունների իրավասությունները՝ կապված երկաթուղային կայարանից դուրս տեղակայված տարածքների հետ՝ երկաթուղային կայարանի կառավարիչը կամ ցանկացած այլ իրավասու անձ երկաթուղային կայարանի տարածքում կամ դրանից դուրս առանձնացնում է կետեր, որտեղ հաշմանդամություն ունեցող անձը կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձը կարող է տեղեկացնել երկաթուղային կայարան իր ժամանման մասին, եւ, անհրաժեշտության դեպքում, օժանդակություն խնդրել.

ե) օժանդակություն տրամադրվում է՝ պայմանով, որ հաշմանդամություն ունեցող անձը կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձը նշանակված վայր ներկայանա նման օժանդակություն տրամադրող երկաթուղային տրանսպորտի կազմակերպության կամ երկաթուղային կայարանի կառավարչի կողմից սահմանված ժամկետում: Սահմանված ժամկետը չպետք է գերազանցի հրապարակված մեկնման ժամանակից կամ բոլոր ուղեւորներից պահանջվող գրանցման ժամանակից առաջ 60 րոպե: Եթե սահմանված չէ այնպիսի ժամկետ, որի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձը կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձը պետք է ներկայանա, ապա տվյալ անձը պետք է ներկայանա նշանակված վայր հրապարակված մեկնման ժամանակից կամ բոլոր ուղեւորներից պահանջվող գրանցման ժամանակից առնվազն 30 րոպե առաջ:

Տեղաշարժման միջոցների կամ այլ հատուկ սարքերի համար փոխհատուցում

Եթե երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունը պատասխանատու է հաշմանդամություն ունեցող անձի կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձի կողմից օգտագործվող տեղաշարժման միջոցի կամ որել է այլ հատուկ սարքավորման ամբողջական կամ մասնակի կորստի, կամ վնասի համար, ապա ֆինանսական փոխհատուցման սահմանափակում կիրառելի չէ:

ԳԼՈՒԽ VI

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ

Հոդված 26

Ուղեւորների անձնական անվտանգությունը

Պետական մարմինների հետ համաձայնության արդյունքում, ենթակառուցվածքի կառավարիչները եւ երկաթուղային կայարանի կառավարիչները համապատասխան միջոցներ են ձեռնարկում իրենց պարտականությունների համապատասխան ոլորտներում եւ համապատասխանեցնում են այդ միջոցները պետական մարմինների կողմից սահմանված անվտանգության մակարդակին՝ նպատակ ունենալով ապահովելու ուղեւորների անձնական անվտանգությունը երկաթուղային կայարաններում եւ գնացքներում, ինչպես նաեւ կառավարել ռիսկերը: Ենթակառուցվածքի կառավարիչները եւ երկաթուղային կայարանի կառավարիչները համագործակցում եւ տեղեկություններ են փոխանակում անվտանգության մակարդակի վրա բացասաբար ազդեցության հավանականություն ունեցող գործողությունները կանխարգելող լավագույն գործելակերպի մասին:

Հոդված 27

Բողոքներ

1. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները սահմանում են բողոքներին ընթացք տալու մեխանիզմ՝ սույն Կանոնակարգով կարգավորվող իրավունքների եւ

պարտականությունների համար: Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունն իր կոնտակտային տվյալների եւ աշխատանքային լեզվի (լեզուների) մասին տեղեկություններ է տարածում ուղեւորների շրջանում:

2. Ուղեւորները իրավունք ունեն բողոք ներկայացնելու երկաթուղային տրանսպորտի ցանկացած կազմակերպության, որի հետ իրենք գործ են ունեցել: Մեկ ամսվա ընթացքում բողոք ստացողը կա՛մ պետք է հիմնավորված պատասխան տա, կա՛մ հիմնավորված դեպքերում՝ տեղեկացնի ուղեւորին, թե բողոքի ստացման ամսաթվից մինչեւ երբ կարելի է պատասխան ակնկալել, որը պետք է երեք ամսից պակաս ժամկետ լինի:

3. 28-րդ հոդվածում նշված տարեկան հաշվետվության մեջ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունը հրապարակում է ստացված բողոքների, ընթացք տրված բողոքների թիվը եւ կատեգորիաները, բողոքներին պատասխանելու ժամանակը եւ բարելավումներին ուղղված՝ ձեռնարկվող գործողությունները:

Հոդված 28

Ծառայության որակի չափանիշներ

1. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները սահմանում են ծառայության որակի չափանիշներ եւ կիրառում են որակի կառավարման համակարգ՝ ծառայության որակը պահպանելու համար: Ծառայության որակի չափանիշներն առնվազն ներառում են III հավելվածում նշված կետերը:

2. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները վերահսկում են իրենց սեփական ցուցանիշներն այնպես, ինչպես դրանք արտացոլված են ծառայության որակի չափանիշներում: Տարեկան հաշվետվության հետ մեկտեղ՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները յուրաքանչյուր տարի հրապարակում են հաշվետվություն ծառայության որակի իրենց ցուցանիշների մասին: Ծառայության որակի չափանիշների մասին հաշվետվությունը հրապարակվում է երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների կայքէջում: Բացի դրանից՝ այդ հաշվետվությունները հրապարակվում են ԵԵԳ կայքէջում:

ԳԼՈՒԽ VII

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՐԿՈՒՄ

Հոդված 29

Ուղեւորներին իրենց իրավունքների մասին տեղեկության տրամադրում

1. Երկաթուղով ուղեւորություն կատարելու համար տոմսեր վաճառելիս՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները, երկաթուղային կայարանի կառավարիչները եւ զբոսաշրջային օպերատորները տեղեկացնում են ուղեւորներին սույն Կանոնակարգի համաձայն, իրենց իրավունքների եւ պարտավորությունների մասին: Տեղեկությունների տրամադրման այս պահանջը պահպանելու համար՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները, երկաթուղային կայարանի կառավարիչները եւ զբոսաշրջային օպերատորները կարող են օգտագործել սույն Կանոնակարգի դրույթների համառոտ նկարագրությունները, որոնք մշակվում են Հանձնաժողովի կողմից Եվրոպական միության ինստիտուտների բոլոր պաշտոնական լեզուներով եւ տրամադրվում են նրանց:

2. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները եւ երկաթուղային կայարանի կառավարիչները պատշաճ եղանակով տեղեկացնում են ուղեւորներին անդամ պետությունների կողմից 30-րդ հոդվածի համաձայն նշանակված մարմնի կամ մարմինների կոնտակտային տվյալների մասին՝ երկաթուղային կայարանում կամ գնացքում:

Հոդված 30

Կիրարկում

1. Յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է սույն Կանոնակարգը կիրարկելու համար պատասխանատու մարմին կամ մարմիններ: Յուրաքանչյուր մարմին անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ ապահովելու համար ուղեւորների իրավունքների պահպանումը:

Յուրաքանչյուր մարմին անկախ է ցանկացած ենթակառուցվածքի կառավարից, մեղադրանք ներկայացնող մարմնից, հատկացումներ կատարող մարմնից կամ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունից իր կազմակերպատիրավական կառուցվածքով, ֆինանսավորման մասին որոշումների կայացման եւ այլ որոշումների կայացման լիազորություններով:

Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են սույն պարբերության համաձայն նշանակված մարմնի կամ մարմինների մասին եւ նրա կամ նրանց համապատասխան պարտավորությունների մասին:

2. Յուրաքանչյուր ուղեւոր կարող է բողոքել 1-ին պարբերության համաձայն նշանակված համապատասխան մարմնի, կամ անդամ պետության կողմից նշանակված որեւէ այլ համապատասխան մարմնի, սույն Կանոնակարգի ենթադրյալ խախտման մասին:

Հոդված 31

Իրավապահ մարմինների միջեւ համագործակցություն

30-րդ հոդվածում նշված իրավապահ մարմինները աշխատանքի եւ որոշումներ կայացնելու սկզբունքների ու գործելակերպերի վերաբերյալ տեղեկություններ են փոխանակում՝ Համայնքում իրենց որոշումների կայացման սկզբունքները համակարգելու նպատակով: Հանձնաժողովն աջակցում է նշված մարմիններին այս խնդրի իրականացման հարցում:

ԳԼՈՒԽ VIII

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 32

Պատժամիջոցներ

Անդամ պետությունները սահմանում են կանոններ այն պատժամիջոցների վերաբերյալ, որոնք կիրառվում են սույն Կանոնակարգի դրույթների խախտումների դեպքում, եւ ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար այդ պատժամիջոցների իրականացումը: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ: Անդամ պետություններն այս դրույթների մասին տեղեկացնում են Հանձնաժողովին ամենաուշը մինչեւ 2010 թվականի հունիսի 3-ը, ինչպես նաեւ անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին հետագայում դրանցում կատարվող ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 33

Հավելվածներ

Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները, որոնք փոփոխվում են հավելվածները նույն կանոնակարգին հարմարեցնելու միջոցով, ընդունվում են 35(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 34

Փոփոխող դրույթներ

1. Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները, որոնք լրացնում են սույն Կանոնակարգը եւ անհրաժեշտ են՝ 2-րդ, 10-րդ եւ 12-րդ հոդվածները կիրարկելու համար, պետք է ընդունվեն՝ 35(2) հոդվածում նշված՝ պատշաճ կերպով իրականացվող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

2. Հաշվի առնելով սղաճը՝ սույն Կանոնակարգում նշված դրամական միջոցների չափի փոփոխության միջոցով սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները (բացի I հավելվածից) ընդունվում են 35(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 35

Կոմիտեի աշխատակարգ

1. Հանձնաժողովին պետք է աջակցի 91/440/ԵՏՀ հրահանգի 11ա հոդվածի համաձայն ստեղծված Կոմիտեն:

2. Սույն պարբերությանը հղում կատարելու դեպքում՝ կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) հոդվածները եւ 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով այդ որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 36

Հաշվետվությունները ներկայացնելը

Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ ամենաուշը մինչեւ 2012 թվականի դեկտեմբերի 3-ը հաշվետվություն է ներկայացնում սույն Կանոնակարգի գործունեության ու արդյունքների եւ, մասնավորապես, ծառայությունների որակի ստանդարտների մասին:

Այդ հաշվետվությունը հենվում է սույն Կանոնակարգի եւ 91/440/ԵՏՀ հրահանգի 10ր հոդվածի համաձայն տրամադրվող տեղեկությունների վրա: Անհրաժեշտության դեպքում հաշվետվությանը կից ներկայացվում են համապատասխան առաջարկություններ:

Հոդված 37

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների Պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից հետո 24 ամսվա ընթացքում:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն գործում է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Ստրասբուրգում, 2007 թվականի հոկտեմբերի 23-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Հ.-Գ. Փոթերինգ

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Մ. Լոբո Անթունես

[1] ՊՏ C 221, 08.09.2005թ., էջ 8:

[2] ՊՏ C 71, 22.03.2005թ., էջ 26:

[3] Եվրոպական պառլամենտի 2005 թվականի սեպտեմբերի 28-ի եզրակացություն (ՊՏ C 227 E, 21.09.2006թ., էջ 490), Խորհրդի 2006 թվականի հուլիսի 24-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 289 E, 28.11.2006թ., էջ 1), Եվրոպական պառլամենտի 2007 թվականի հունվարի 18-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չհրապարակված), 2007

թվականի սեպտեմբերի 25-ի Եվրոպական պառլամենտի օրենսդրական որոշում եւ
Խորհրդի 2007 թվականի սեպտեմբերի 26-ի որոշում:

[4] ՊՏ C 137, 08.06.2002թ., էջ 2:

5) ՊՏ L 110, 20.04.2001թ., էջ 1: Վերջին անգամ Հանձնաժողովի թիվ 2007/32/ԵՀ
հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 141, 02.06.2007թ., էջ 63):

[6] ՊՏ L 281, 23.11.1995թ., էջ 31: Վերջին անգամ թիվ 1882/2003 կանոնակարգով (ԵՀ)
փոփոխված հրահանգ (ՊՏ, L 284, 31.10.2003թ., էջ 1):

[7] ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:2006/512/ԵՀ որոշմամբ փոփոխված որոշում (ՊՏ L 200,
22.07.2006թ., էջ 11):

[8] ՊՏ, L 143, 27.06.1995թ., էջ 70: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի
2004/49/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ, L 164, 30.04.2004թ., էջ 44):

[9] ՊՏ L 237, 24.08.1991թ., էջ 25: Վերջին անգամ 2006/103/ԵՀ հրահանգով փոփոխված
հրահանգ (ՊՏ L 363, 20.12.2006թ., էջ 344):

[10] Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001 թվականի փետրվարի 26-ի 2001/14/ԵՀ
հրահանգ՝ «Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի թողունակության բաշխման
եւ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման վճարների գանձման
մասին» (ՊՏ L 75, 15.03.2001թ., էջ 29) 2004/49/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված
հրահանգ:

«Ճամփորդությունների, արձակուրդների եւ ուղեւորությունների փաթեթների մասին»
Խորհրդի 1990 թվականի հունիսի 13-ի 90/314/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 158, 23.06.1990թ., էջ
59):

20071023

ՀԱՎԵԼՎԱԾ I

**Երկաթուղով ուղեւորների եւ բեռների միջազգային փոխադրման պայմանագրերին
վերաբերող Միասնական կանոններից քաղվածք (CIV)**

20071023

Հավելված Ա

**կցված 1980 թվականի մայիսի 9-ի «Երկաթուղով միջազգային փոխադրումների մասին»
կոնվենցիային (ԵՄՓԿ)՝ փոփոխված 1999 թվականի հունիսի 3-ի «Երկաթուղով
միջազգային փոխադրումների մասին» կոնվենցիան փոփոխելու նպատակով
արձանագրությամբ**

ԲԱԺԻՆ II

ՓՈԽԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄ

Հոդված 6

Փոխադրման պայմանագիր

1. Փոխադրման պայմանագրով փոխադրողը ժամանման վայր է փոխադրում ուղեւորներին, ինչպես նաեւ, հարկ եղած դեպքում՝ նրանց ուղեբեռներն ու փոխադրամիջոցները եւ այդ վայրում նրանց է փոխանցում իրենց ուղեբեռներն ու փոխադրամիջոցները:
2. Փոխադրման պայմանագիրը վավերացվում է մեկ կամ մի քանի տոմսերի միջոցով, որոնք տրամադրվում են ուղեւորին: Այնուամենայնիվ, 9-րդ հոդվածի համաձայն տոմսի բացակայությունը, դրանցում անճշտությունները կամ տոմսը կորցնելը չպետք է ազդի պայմանագրի առկայության կամ դրա վավերության վրա, որը կշարունակվի կարգավորվել Միասնական կանոններով:
3. Տոմսը փոխադրման պայմանագրի կնքման եւ դրա բովանդակության առերեսույթ ապացույց է:

Հոդված 7

Տոմս

1. Փոխադրման ընդհանուր պայմաններով սահմանվում են տոմսերի ձևը և բովանդակությունը, ինչպես նաև լեզուն և բնույթը, որով դրանք պետք է տպվեն և դուրս գրվեն:

2. Տոմսի մեջ պետք է նշվի առնվազն հետևյալը՝

ա) փոխադրողը կամ փոխադրողները.

բ) նշում, որ անկախ հակառակ որեւէ դրույթի, փոխադրումը կարգավորվում է սույն Միասնական կանոններով. դա կարող է նշված լինել CIV հապավումով.

գ) փոխադրման պայմանագրի կնքումը և դրա բովանդակությունը հաստատող որեւէ այլ հայտարարություն, որն իրավունք կտա ուղեորին պաշտպանելու այդ պայմանագրից բխող իր իրավունքները:

3. Տոմսն ստանալիս՝ ուղեորը պետք է համոզվի, որ այն կազմվել է իրեն տրված հրահանգների համաձայն:

4. Տոմսը փոխանցելի է, եթե այն դուրս չի գրվել ուղեորի անունով, և եթե ուղեորությունը դեռ չի սկսվել:

5. Տոմսը հաստատվում է էլեկտրոնային տվյալների գրանցման ձևով, որը հնարավոր է փոխանցել ընթեռնելի գրավոր սիմվոլներով: Տվյալների գրանցման և մշակման ընթացակարգը պետք է ֆունկցիոնալ առումով համարժեք լինի, մասնավորապես այդ տվյալները ներկայացնող տոմսի ապացուցողական արժեքի մասով:

Հոդված 8

Փոխադրման վճարի վճարումը և փոխհատուցումը

1. Ուղեորի և փոխադրողի միջև հակառակի մասին պայմանագրի համաձայն՝ փոխադրման վճարումը կատարվում է նախօրոք:

2. Փոխադրման ընդհանուր պայմանները սահմանում են, թե որ պայմանների համաձայն է փոխադրման վճարը փոխհատուցվում:

Հոդված 9

Փոխադրվելու իրավունք Փոխադրում կատարելուց հրաժարվելը

1. Ուղեւորը ուղեւորության սկզբից պետք է ունենա վավեր տոմս եւ ներկայացնի այն, երբ ստուգվում են տոմսերը: Փոխադրման ընդհանուր պայմաններով կարող է սահմանվել՝

ա) որ ուղեւորը, որը չի ներկայացնում վավեր տոմս, պետք է, փոխադրման վճարից բացի, լրացուցիչ վճարում կատարի:

բ) որ այն ուղեւորից, որը պահանջի դեպքում հրաժարվում է վճարում կատարել փոխադրման համար կամ լրացուցիչ վճար, կարելի է պահանջել դադարեցնել ուղեւորությունը:

գ) որ պայմանների ներքո կարելի է կատարել լրացուցիչ վճարի փոխհատուցում, եթե այն փոխհատուցվելու է:

2. Փոխադրման ընդհանուր պայմաններով կարող է սահմանվել, որ այն ուղեւորները, որոնք՝

ա) վտանգ են ներկայացնում երկաթուղային տրանսպորտի անվտանգությանը եւ սահուն գործունեությանը կամ այլ ուղեւորների ապահովությանը:

բ) մյուս ուղեւորներին պատճառում են անհանդուրժելի անհարմարություններ

կարող են չփոխադրվել կամ նրանցից կարելի է պահանջել դադարեցնել ուղեւորությունը, եւ որ նման անձինք իրավունք չունեն պահանջելու փոխադրման վճարի կամ գրանցված ուղեբեռի փոխադրման համար որեւէ գումարի փոխհատուցում, որը նրանք վճարել են:

Հոդված 10

Վարչական ձեւակերպումների կազմում

Ուղեւորները պետք է պահպանեն մաքսային եւ այլ վարչական մարմինների կողմից պահանջվող ձեւակերպումների պահանջները:

Հոդված 11

Գնացքների ուղերթների հետաձգում կամ ուշացում Բաց թողնված գնացք

Փոխադրողն անհրաժեշտության դեպքում տոմսի վրա վավերացնում է, որ գնացքի ուղերթը հետաձգվել կամ գնացքը բաց է թողնվել:

ԲԱԺԻՆ III

ՁԵՌՔԻ ՈՒՂԵՔԵՌԻ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ՀԱՆՁՆՎԱԾ ՈՒՂԵՔԵՌԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄ

Գլուխ I

Ընդհանուր դրույթներ

Հոդված 12

Տեղափոխելու համար թույլատրելի պարագաներ եւ կենդանիներ

1. Ուղեւորները կարող են իրենց հետ գնացք բարձրացնել հեշտ տնօրինվող պարագաներ (ձեռքի ուղեբեռ) եւ կենդանի կենդանիներ՝ Փոխադրման ընդհանուր պայմանների համաձայն: Բացի դրանից՝ ուղեւորները կարող են իրենց հետ վերցնել ծանրաշարժ պարագաներ՝ Փոխադրման ընդհանուր պայմաններում նշված հատուկ դրույթների համաձայն: Այն պարագաները կամ կենդանիները, որոնք կարող են անհանգստացնել կամ անհարմարություն պատճառել ուղեւորներին, կամ նրանց վնաս տալ, չեն թույլատրվում որպես ձեռքի ուղեբեռ:
2. Ուղեւորները հանձնում են պարագաները եւ կենդանիները որպես գրանցված ուղեբեռ՝ Փոխադրման ընդհանուր պայմանների համաձայն:
3. Փոխադրողը կարող է թույլատրել փոխադրել փոխադրամիջոցներ, եթե ուղեւորները տեղափոխվում են Փոխադրման ընդհանուր պայմաններում պարունակվող հատուկ դրույթների համաձայն:
4. Որպես ձեռքի ուղեբեռ, գրանցված ուղեբեռ կամ փոխադրամիջոցի վրա կամ դրա մեջ վտանգավոր ապրանքների փոխադրումը, որոնք սույն գլխի համաձայն տեղափոխվում են երկաթուղով, պետք է կատարվի «Երկաթուղով վտանգավոր ապրանքների փոխադրման մասին» կանոնակարգի պահանջների համաձայն:

Հոդված 13

Չննում

1. Եթե բավարար հիմք կա կասկածելու, որ փոխադրման պայմանները չեն պահպանվել, ապա փոխադրողն իրավունք ունի զննելու, թե արդյոք գնացք բարձրացրած պարագաները (ձեռքի ուղեբեռը, գրանցված ուղեբեռը, փոխադրամիջոցները՝ ներառյալ դրանցում գտնվող բեռը) եւ կենդանիները բավարարում են փոխադրման պայմանները՝ բացառությամբ, եթե զննում կատարելու երկրի օրենքները եւ իրավական նորմերը արգելում են նման զննում կատարել: Ուղեւորը պետք է հրավիրվի ներկա լինել նման զննման ժամանակ: Եթե ուղեւորը ներկա չէ, կամ նրան հնարավոր չէ գտնել, ապա փոխադրողը պարտավոր է պահանջել երկու անկախ վկաների ներկայությունը:

2. Եթե հաստատվում է, որ փոխադրման պայմանները չեն պահպանվել, ապա փոխադրողը կարող է պահանջել, որ ուղեւորը վճարի նման զննում կատարելու ծախսերը:

Հոդված 14

Վարչական ձեւակերպումների կատարում

Ուղեւորները պետք է պահպանեն մաքսային եւ այլ վարչական մարմինների կողմից պահանջվող ձեւակերպումների պահանջները, երբ փոխադրելիս նրանք իրենց հետ կրում են պարագաներ (ձեռքի ուղեբեռ, գրանցված ուղեբեռ, փոխադրամիջոցներ՝ ներառյալ դրանց բեռները) կամ կենդանիներ: Նա պետք է ներկա գտնվի այդ պարագաների զննման ընթացքում՝ բացառությամբ եթե այլ բան է նախատեսված տվյալ անդամ պետության օրենքներով եւ իրավական նորմերով:

Գլուխ II

Ձեռքի ուղեբեռ եւ կենդանիներ

Հոդված 15

Հսկում

Իր հետ վերցրած ձեռքի ուղեբեռի եւ կենդանիների հսկումը ուղեւորի պարտականությունն է:

Գլուխ III

Գրանցված ուղեբեռ

Հոդված 16

Գրանցված ուղեբեռի առաքում

1. Գրանցված ուղեբեռն առաքելու պայմանագրային պարտավորությունները պետք է հաստատվեն ուղեբեռի գրանցման վաուչերով, որը տրամադրվում է ուղեւորին:
2. 22-րդ հոդվածի համաձայն տոմսի բացակայությունը, դրանցում անճշտությունները կամ տոմսը կորցնելը չպետք է ազդի պայմանագրի առկայության կամ դրա վավերության վրա՝ կապված ուղեբեռի առաքման հետ, որը կշարունակվի կարգավորվել Միասնական կանոններով:
3. Ուղեբեռի գրանցման վաուչերը ուղեբեռի գրանցման եւ փոխադրման պայմանների առերեսույթ ապացույց է :
4. Պահպանելով հակառակն ապացուցելու իրավունքը՝ ենթադրվում է, որ երբ փոխադրողը վերցրել է գրանցված ուղեբեռը, այն ակնհայտորեն եղել է լավ վիճակում եւ որ ուղեբեռի գրանցման համարը եւ միջի պարագաների զանգվածը համապատասխանում է ուղեբեռի գրանցման վաուչերի վրա նշված գրանցումներին:

Հոդված 17

Ուղեբեռի գրանցման վաուչեր

1. Փոխադրման ընդհանուր պայմաններով սահմանվում են ուղեբեռի գրանցման վաուչերի ձեւը եւ բովանդակությունը, ինչպես նաեւ լեզուն եւ բնույթը, որով դրանք պետք է տպվեն եւ դուրս գրվեն: 7(5) հոդվածը կիրառվում է համապատասխան փոփոխություններ մտցնելուց հետո:
2. Ուղեբեռի գրանցման վաուչերի մեջ պետք է նշվի առնվազն հետեւյալը՝
 - ա) փոխադրողը կամ փոխադրողները.

բ) նշում, որ անկախ հակառակ որեւէ դրույթի, փոխադրումը կարգավորվում է Միասնական կանոններով. դա կարող է նշված լինի CIV հապավումով.

ց) գրանցված ուղեբեռի առաքման հետ կապված պայմանագրային պարտավորությունները հաստատող որեւէ այլ հայտարարություն, որն իրավունք կտա ուղեւորին պաշտպանելու փոխադրման պայմանագրից բխող իր իրավունքները:

3. Ուղեբեռի գրանցման վաուչեր ստանալիս՝ ուղեւորը պետք է համոզվի, որ այն կազմվել է իրեն տրված հրահանգների համաձայն:

Հոդված 18

Գրանցում եւ փոխադրում

1. Բացառությամբ եթե Փոխադրման ընդհանուր պայմաններով այլ բան նախատեսված չէ՝ ուղեբեռը գրանցվում է միայն այն դեպքում, եթե ներկայացվում է տոմսը, որը վավեր է առնվազն մինչեւ ուղեբեռի առաքման վայրը: Այլ պարագաներում ուղեբեռի գրանցումը կատարվում է առաքման վայրում գործող իրավական նորմերի համաձայն:

2. Այն դեպքերում, երբ Փոխադրման ընդհանուր պայմաններով սահմանվում է, որ ուղեբեռը կարելի է հանձնել փոխադրման համար առանց տոմս ներկայացնելու, ապա գրանցված ուղեբեռի մասով ուղեւորի իրավունքները եւ պարտավորությունները սահմանող Միասնական կանոններին համապատասխան դրույթները կիրառվում են համապատասխան փոփոխություններով գրանցված ուղեբեռը առաքողի նկատմամբ:

3. Փոխադրողը կարող է առաքել գրանցված ուղեբեռը մեկ այլ գնացքով կամ տրանսպորտի այլ միջոցով եւ այլ ճանապարհով, որը տարբերվում է ուղեւորի ուղերթից:

Հոդված 19

Գրանցված ուղեբեռի փոխադրման համար վճարումների կատարում

Եթե ուղեւորի եւ փոխադրողի միջեւ պայմանագրով այլ բան նախատեսված չէ՝ գրանցված ուղեբեռի փոխադրման վճարումը կատարվում է գրանցման պահին:

Հոդված 20

Գրանցված ուղեբեռի վրա նշումների կատարում

Գրանցված ուղեբեռի յուրաքանչյուր կտորի վրա ուղեւորը պետք է հստակ տեսանելի տեղում, բավարար ամուր եւ ընթեռնելի եղանակով նշի՝

ա) իր անունը կամ հասցեն.

բ) առաքման վայրը:

Հոդված 21

Գրանցված ուղեբեռը չուղարկելու իրավունք

1. Եթե հանգամանքները թույլ են տալիս եւ եթե մաքսային կամ այլ վարչական մարմինների պահանջները չեն խախտվում, ապա ուղեւորը կարող է պահանջել հանձնած ուղեբեռը հետ վերցնել հանձնման վայրում՝ հանձնելով ուղեբեռի գրանցման վաուչերը, եւ եթե Փոխադրման ընդհանուր պայմանները պահանջում են՝ ներկայացնելով տոմսը:

2. Փոխադրման ընդհանուր պայմաններում կարող են ներառվել գրանցված ուղեբեռը հետ վերցնելու իրավունքի մասին այլ դրույթներ՝ փոփոխելով առաքման վայրը, որի հնարավոր ֆինանսական հետեւանքները կրում է ուղեւորը:

Հոդված 22

Հանձնում

1. Գրանցված ուղեբեռը հանձնվում է ուղեբեռի գրանցման վաուչերը հանձնելու դեպքում, եւ հարկ եղած դեպքում՝ առաքման համար վճարվող գումարների դիմաց:

Փոխադրողն իրավունք ունի, բայց պարտավոր չէ քննել, թե վաուչերի իրավատերը իրավունք ունի՞ ուղեբեռն ընդունելու, թե ոչ:

2. Ուղեբեռի գրանցման վաուչեր ունեցող անձին ուղեբեռը համարվում է հանձնված, եթե առաքման վայրում գործող իրավական նորմերի համաձայն՝

ա) ուղեբեռը հանձնվել է մաքսային կամ քաղաքային մաքսային մարմիններին՝ նրանց տարածքներում կամ պահեստներում, երբ դրանք փոխադրողի հսկողությունից դուրս են.

բ) կենդանի կենդանիները հանձնվել են երրորդ անձանց:

3. Ուղեբեռի գրանցման վաուչերի իրավատերը կարող է պահանջել իրենց հանձնել ուղեբեռը առաքման վայրում, երբ պայմանավորված ժամանակը, իսկ հարկ եղած դեպքում՝ մաքսային եւ այլ վարչական մարմինների կողմից իրականացվող գործողությունների համար անհրաժեշտ ժամանակը լրանում է:

4. Եթե ուղեբեռի գրանցման վաուչերը չի հանձնվում, ապա փոխադրողը պարտավոր է ուղեբեռը հանձնել միայն այն անձին, որն ապացուցում է տվյալ ուղեբեռի նկատմամբ իր իրավունքը. եթե ներկայացված ապացույցները բավարար չեն, ապա փոխադրողը կարող է պահանջել իրեն տրամադրել համոզիչ այլ միջոցներ:

5. Ուղեբեռը տրամադրվում է առաքման այն վայրում, որի համար այն գրանցվել է:

6. Ուղեբեռի գրանցման վաուչերի իրավատերը, որին ուղեբեռը չի հանձնվել, կարող է պահանջել, որ իր վաուչերի վրա նշվի օրը եւ ժամը, որի համար նա պահանջում է իրեն հանձնել ուղեբեռը՝ 3-րդ պարբերության համաձայն:

7. Իրավասու անձը կարող է հրաժարվել ընդունել ուղեբեռը, եթե փոխադրողը չի կատարում գրանցված ուղեբեռը զննելու իր պահանջը՝ ենթադրվող վնասը հաստատելու համար:

8. Այլ պարագաներում ուղեբեռի ստացումը կատարվում է առաքման վայրում գործող իրավական նորմերի համաձայն:

ԳԼՈՒԽ I V

Փոխադրամիջոցներ

Հոդված 23

Փոխադրման պայմաններ

Փոխադրամիջոցների փոխադրումը կարգավորող հատուկ դրույթները, որոնք ներառված են Փոխադրման ընդհանուր պայմաններում, մասնավորապես, սահմանում են փոխադրման, գրանցման, բեռնման եւ փոխադրման, բեռնաթափման եւ հանձնման պայմանները, ինչպես նաեւ ուղեւորի պարտավորությունները:

Հոդված 24

Փոխադրման վաուչեր

1. Փոխադրամիջոցների փոխադրման պայմանագրային պարտավորությունները պետք է հաստատվեն փոխադրման վաուչերով, որը տրամադրվում է ուղեւորին: Փոխադրման վաուչերը կարող է ներառվել ուղեւորի տոմսի մեջ:
2. Փոխադրամիջոցների փոխադրումը կարգավորող հատուկ դրույթներով, որոնք ներառված են Փոխադրման ընդհանուր պայմաններում, սահմանվում են փոխադրման վաուչերի ձեւը եւ բովանդակությունը, ինչպես նաեւ լեզուն եւ բնույթը, որով դրանք պետք է տպվեն եւ դուրս գրվեն: 7(5) հոդվածը կիրառվում է համապատասխան փոփոխություններով:
3. Փոխադրման վաուչերի մեջ պետք է նշվի առնվազն հետեւյալը՝
 - ա) փոխադրողը կամ փոխադրողները.
 - բ) նշում, որ անկախ հակառակ որեւէ դրույթի, փոխադրումը կարգավորվում է սույն Միասնական կանոններով. դա կարող է նշված լինի CIV հապավումով.
 - գ) փոխադրամիջոցների փոխադրման հետ կապված պայմանագրային պարտավորությունները հաստատող որեւէ այլ հայտարարություն, որն իրավունք կտա ուղեւորին պաշտպանելու փոխադրման պայմանագրից բխող իր իրավունքները:
4. Փոխադրման վաուչերն ստանալիս՝ ուղեւորը պետք է համոզվի, որ այն դուրս է գրվել իրեն տրված հրահանգների համաձայն:

Հոդված 25

Կիրառելի իրավունք

Սույն գլխի դրույթների համաձայն՝ ուղեբեռի փոխադրմանը վերաբերող՝ III գլխի դրույթները կիրառվում են փոխադրամիջոցների նկատմամբ:

ԲԱԺԻՆ IV

ՓՈԽԱԴՐՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ I

Ուղեւորների մահվան կամ նրանց հասցված անձնական վնասի համար պարտավորություն

Հոդված 26

Պարտավորության հիմք

1. Փոխադրողը պատասխանատու է մահվան հետեւանքով ուղեւորին հասցված կորստի կամ վնասի համար կամ նրան պատճառած ֆիզիկական վնասի կամ որեւէ այլ տիպի ֆիզիկական կամ բարոյական վնասի համար, որի պատճառ է եղել երկաթուղու շահագործման հետ կապված պատահարը, որը տեղի է ունեցել, երբ ուղեւորը բարձրացել կամ իջել է երկաթուղային տրանսպորտից՝ անկախ երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործված տեսակից:

2. Փոխադրողն ազատվում է այս պարտավորությունից՝

ա) եթե պատահարը տեղի է ունեցել երկաթուղու շահագործման հետ չկապված հանգամանքներում, եւ որից հնարավոր չէր խուսափել, չնայած տվյալ դեպքի մասնավոր հանգամանքներում փոխադրողի կողմից ձեռնարկված միջոցների, եւ որի հետեւանքները փոխադրողն ի վիճակի չի եղել կանխարգելելու:

բ) եթե դժբախտ պատահարը տեղի է ունեցել ուղեւորի սխալի հետեւանքով:

ա) եթե դժբախտ պատահարը տեղի է ունեցել երրորդ անձի գործողությունների հետեւանքով, եւ որից հնարավոր չէր խուսափել, չնայած տվյալ դեպքի մասնավոր հանգամանքներում փոխադրողի կողմից ձեռնարկված միջոցների եւ որի հետեւանքները փոխադրողն ի վիճակի չի եղել կանխարգելել: միեւնոյն երկաթուղային ենթակառուցվածքից օգտվող մեկ այլ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունը չի համարվում երրորդ անձ: ռեգրեսիվ հայցով դիմելու իրավունքը չի բացառվում:

3. Եթե պատահարը տեղի է ունեցել երրորդ անձի գործողությունների հետեանքով եւ, եթե չնայած դրան, փոխադրողն ամբողջությամբ չի ազատվել իր պարտավորությունից՝ 2-րդ պարբերության համաձայն, այնուամենայնիվ,

գ) նա պարտավորություն է կրում Միասնական կանոններում սահմանված ամբողջ չափով՝ չսահմանափակելով տվյալ երրորդ անձի դեմ ռեգրեսիվ հայցով դիմելու փոխադրողի իրավունքը:

4. Սույն Միասնական կանոնները չեն կիրառվում որեւէ պարտավորության նկատմամբ, որը կարող է կրել փոխադրողը 1-ին պարբերությամբ չսահմանված դեպքերում:

5. Եթե փոխադրման մեկ պայմանագրով կարգավորվող փոխադրումն իրականացվում է մի քանի փոխադրողների կողմից, փոխադրման պայմանագրի համաձայն փոխադրման ծառայություն մատուցելու պարտավորություններ կրող փոխադրողը, որի ընթացքում պատահարը տեղի է ունեցել, պատասխանատու է ուղեւորների մահվան եւ անձնական վնասի համար: Եթե այդ ծառայությունը մատուցված չէ տվյալ փոխադրողի կողմից, այլ նրան փոխարինող փոխադրողի կողմից, ապա այդ երկու փոխադրողը, Միասնական կանոնների համաձայն, միասին եւ խիստ պատասխանատվություն են կրում:

Հոդված 27

Մահվան դեպքում վնասներ

1. 1. Ուղեւորի մահվան դեպքում վնասներն ներառում են՝

ա) մահվան հետ կապված կատարված ծախսերը, մասնավորապես, մահացածի մարմնի տեղափոխումը եւ թաղման ծախսերը.

բ) եթե մահը միանգամից տեղի չի ունեցել, ապա 28-րդ հոդվածում սահմանված վնասները:

2. Եթե ուղեւորի մահվան հետեանքով այն անձինք, որոնք մահացած անձի հետ ունեին կամ կարող էին ունենալ խնամակալության իրավական պաշտպանություն, զրկվում են իրենց աջակցության միջոցներից, ապա նման անձինք պետք է փոխհատուցվեն այդ կորստի համար: Այն անձանց վնասի փոխհատուցումը, որոնց մահացած ուղեւորը խնամակալում էր առանց իրավաբանորեն պարտավորություն ունենալու, կարգավորվում է ազգային իրավունքով:

Հոդված 28

Անձին հասցված վնասներ

Ուղեորի անձին հասցված վնասի կամ որել է այլ ֆիզիկական, կամ բարոյական վնասի դեպքում, վնասները ներառում են՝

ա) կատարված բոլոր անհրաժեշտ ծախսերը, մասնավորապես՝ կապված բուժման եւ տեղափոխման հետ.

բ) ֆինանսական վնասի փոխհատուցում՝ կապված մասնակի կամ լրիվ անաշխատունակության, կա՛մ ավելացած ծախսերի հետ:

Հոդված 29

Մարմնական այլ վնասի դեպքում փոխհատուցում

Ազգային իրավունքով սահմանվում է, թե արդյոք եւ ինչ չափով պետք է փոխադրողը վճարի մարմնական վնասի դեպքում հասցված վնասների դեպքում՝ բացառությամբ 27-րդ եւ 28-րդ հոդվածներում սահմանված դեպքերի:

Հոդված 30

Մահվան եւ անձին հասցված վնասի դեպքում փոխհատուցման ձեւն ու չափը

1. 27(2) հոդվածի եւ 28(բ) հոդվածի համաձայն՝ վնասների փոխհատուցումը տրամադրվում է միանվագ: Այնուամենայնիվ, եթե ազգային իրավունքը թույլ է տալիս վճարել անուիտետ, ապա վնասի փոխհատուցումը տրամադրվում է այդ ձեւով, եթե վնաս կրած ուղեորը կամ 27(2) հոդվածում նշված իրավունքներ ունեցող անձինք նման պահանջ են ներկայացնում:

2. 1-ին պարբերության համաձայն՝ տրամադրվող վնասի փոխհատուցման չափը որոշվում է ազգային իրավունքի համաձայն: Այնուամենայնիվ, սույն Միասնական կանոնների նպատակներով, մեկ ուղեորին տրամադրվող փոխհատուցման վերին շեմ է սահմանվում 175000 հաշվարկային միավորը որպես միանվագ գումար, կամ, որպես այդ գումարին համարժեք տարեկան անուիտետ, եթե ազգային իրավունքով թույլատրվում է այդ գումարից ցածր վերին շեմ:

Հոդված 31

Տրանսպորտի այլ միջոցներ

1. Կարգավորվելով 2-րդ պարբերությամբ՝ ուղեւորի մահվան կամ նրա անձին հասցված վնասի դեպքում փոխադրողի պարտավորությանը վերաբերող դրույթները չեն կիրառվում այն դեպքերում, երբ փոխադրման ընթացքում առաջացած կորուստը կամ վնասը, փոխադրման պայմանագրի համաձայն, չի համարվում երկաթուղով տեղափոխում:
2. Այնուամենայնիվ, երբ երկաթուղային փոխադրամիջոցները տեղափոխվում են նավով, ուղեւորի մահվան կամ նրա անձին հասցված վնասի դեպքում փոխադրողի պարտավորությանը վերաբերող դրույթները կիրառվում են 26(1) հոդվածում եւ 33(1) հոդվածում նշված կորստի կամ վնասի դեպքում, որի պատճառ է եղել երկաթուղու շահագործման հետ կապված պատահարը եւ որը տեղի է ունեցել, երբ ուղեւորը բարձրացել կամ իջել է նշված փոխադրամիջոցից:
3. Եթե բացառիկ հանգամանքների հետեւանքով երկաթուղու շահագործումը ժամանակավորապես կասեցվում է եւ ուղեւորներին տեղափոխում են տրանսպորտի որեւէ այլ միջոցով, ապա փոխադրողը շարունակում է պարտավորություն կրել սույն Միասնական կանոնների համաձայն:

Գլուխ II

Ժամանակացույցը չպահպանելու դեպքում պարտավորություն

Հոդված 32

Հետաձգման, գնացքների ուշացման կամ բաց թողնված գնացք

1. Փոխադրողը պարտավորություն է կրում ուղեւորի առջեւ հետաձգման, բաց թողնված գնացքի կամ գնացքի ուշացման փաստից բխող կորստի կամ վնասի համար, որի հետեւանքով ուղեւորի ուղեւորությունը չի կարող շարունակվել միեւնոյն օրը, կամ եթե միեւնոյն օրը նրա ուղեւորության շարունակում պահանջելը ողջամիտ չի կարող լինել՝ որոշակի հանգամանքների հետեւանքով: Վնասի փոխհատուցման մեջ ներառվում են կացարան վարձելու հիմնավոր ծախսերը, ինչպես նաեւ ուղեւորին սպասող անձին տեղեկացնելու հետ կապված հիմնավոր ծախսերը:

2. Փոխադրողն ազատվում է իր պարտավորությունից, եթե հետաձգումը, ուշացումը կամ գնացքի բացթողումը կապված է հետեւյալ պատճառներից որեւէ մեկի հետ՝

ա) երկաթուղու շահագործման հետ չկապված հանգամանքներ, որից հնարավոր չէր խուսափել, չնայած տվյալ դեպքի մասնավոր հանգամանքներում փոխադրողի կողմից ձեռնարկված միջոցների, եւ որի հետեւանքները փոխադրողն ի վիճակի չի եղել կանխարգելել.

բ) ուղեւորի կողմից թույլ տված սխալ. կամ

գ) երրորդ անձի գործողություններ, որոնցից հնարավոր չէր խուսափել, չնայած տվյալ դեպքի մասնավոր հանգամանքներում փոխադրողի կողմից ձեռնարկված միջոցների, եւ որի հետեւանքները փոխադրողն ի վիճակի չի եղել կանխարգելել. միեւնոյն երկաթուղային ենթակառուցվածքից օգտվող մեկ այլ երկաթուղային տրանսպորտի կազմակերպություն չի համարվում երրորդ անձ. ռեգրեսիվ հայցով դիմելու իրավունքը չի բացառվում:

3. Ազգային իրավունքով սահմանվում է, թե արդյոք եւ ինչ չափով պետք է փոխադրողը փոխհատուցում վճարի 1-ին պարբերության մեջ սահմանված դեպքերից բացի այլ դեպքերում: Այս դրույթը չի սահմանափակում 44-րդ հոդվածի գործողությունը:

Գլուխ III

Ձեռքի ուղեբեռի, կենդանիների, գրանցված ուղեբեռի եւ փոխադրամիջոցների համար պարտավորություն

ԲԱԺԻՆ 1

Ձեռքի ուղեբեռ եւ կենդանիներ

Հոդված 33

Պարտավորություն

1. Ուղեւորների մահվան կամ նրանց անձին պատճառված վնասի դեպքում փոխադրողը նաեւ պատասխանատու է՝ որպես ձեռքի ուղեբեռ՝ ուղեւորի կողմից իր վրա կամ իր հետ ունեցած պարագաների լրիվ կամ մասնակի կորստի կամ նրանց հասցված վնասի

հետեւանքով առաջացած կորստի կամ վնասի համար. սա վերաբերում է նաեւ այն կենդանիներին, որոնց ուղեւորը վերցրել է իր հետ: 26-րդ հոդվածը կիրառվում է համապատասխան փոփոխություններով:

2. Այլ առումներով փոխադրողը պատասխանատու չէ պարագաների, ձեռքի ուղեբեռի կամ կենդանիների լրիվ կամ մասնակի կորստի կամ վնասի համար, եթե դրանց հսկողությունը 15-րդ հոդվածի համաձայն ուղեւորի պատասխանատվությունն է՝ բացառությամբ եթե այդ կորստի կամ վնասի պատճառ է եղել փոխադրողի սխալը: IV բաժնի այլ հոդվածները, բացառությամբ 51-րդ հոդվածի եւ VI բաժնի, այս դեպքում չի կիրառվում:

Հոդված 34

Պարագաների կորստի կամ դրանց հասցված վնասի դեպքում փոխհատուցման սահմանաչափ

Եթե փոխադրողը պարտավորություն ունի 33(1) հոդվածի համաձայն, ապա նա պետք է փոխհատուցում վճարի մեկ ուղեւորի համար 1400 հաշվարկային միավորի չափով:

Հոդված 35

Պարտավորությունից ազատում

Փոխադրողը պարտավորություն չի կրում ուղեւորի առջեւ այն կորստի կամ վնասի համար, որն առաջացել է այն փաստի հետեւանքով, որ ուղեւորը չի պահպանել մաքսային կամ այլ վարչական մարմինների կողմից պահանջվող ձեւակերպումների պահանջները:

ԲԱԺԻՆ 2

Գրանցած ուղեբեռ

Հոդված 36

Պարտավորության հիմք

1. Փոխադրողը պարտավորություն է կրում գրանցված ուղեբեռի լրիվ կամ մասնակի կորստի կամ դրան հասցված վնասի հետեւանքով առաջացած կորստի կամ վնասի համար, որը տեղի է ունեցել փոխադրողի կողմից այն վերցնելու եւ այն հետ հանձնելու միջեւ ընկած ժամանակահատվածում, ինչպես նաեւ ուղեբեռի հանձնումն ուշացնելու ժամանակ:

2. Փոխադրողն ազատվում է իր պարտավորությունից, եթե կորուստը, վնասը կամ առաքման ուշացումը տեղի է ունեցել ուղեւորի սխալի, նրա կողմից տրված հրահանգի (բացառությամբ փոխադրողի մեղքով), գրանցված ուղեբեռի վրայի խոտանի կամ այն հանգամանքների հետեւանքով, որոնցից փոխադրողը չէր կարող խուսափել եւ որոնց հետեւանքները նաեւ չէր կարող կանխարգելել:

3. Փոխադրողն ազատվում է իր պարտավորությունից, եթե կորուստը կամ վնասն առաջանում է հետեւյալ հանգամանքներից մեկին կամ մի քանիսին բնորոշ հատուկ ռիսկերից՝

ա) փաթեթավորման բացակայություն կամ անբավարար փաթեթավորում.

բ) ուղեբեռի հատուկ բնույթ.

գ) փոխադրման համար անթույլատրելի պարագաների առաքում՝ որպես ուղեբեռ:

Հոդված 37

Ապացուցման բեռ

1. Փոխադրողը կրում է կորստի, վնասի կամ առաքումը ուշացնող՝ 36(2) հոդվածում սահմանված պատճառներից որեւէ մեկով պայմանավորված լինելու ապացուցման բեռը:

2. Եթե փոխադրողն ապացուցում է, որ հաշվի առնելով կոնկրետ դեպքի հանգամանքները, կորուստը կամ վնասը կարող էր առաջ եկած լինել 36(3) հոդվածում նշված հատուկ

ռիսկերից մեկի կամ մի քանիսի հետեւանքով, ապա ենթադրվում է, որ նման կորուստ կամ վնաս չի առաջացել: Վնասի կամ կորստի համար փոխհատուցման իրավունք ունեցող անձը, այնուամենայնիվ, իրավունք ունի ապացուցելու, որ տվյալ կորուստը կամ վնասը լրիվ կամ մասամբ պայմանավորված չի եղել այդ ռիսկերից որեւէ մեկով:

Հոդված 38

Իրար հաջորդող փոխադրողներ

Եթե մեկ պայմանագրով կարգավորվող փոխադրումն իրականացվում է մի քանի իրար հաջորդող փոխադրողների կողմից, ապա յուրաքանչյուր փոխադրող, ընդունելով ուղեբեռը ուղեբեռի գրանցման վաուչերի հիմքով կամ փոխադրամիջոցը՝ փոխադրման վաուչերի հիմքով, դառնում է այդ փոխադրման պայմանագրի կողմ՝ կապված ուղեբեռի գրանցման վաուչերի կամ փոխադրման վաուչերում սահմանված պայմանների համաձայն տվյալ ուղեբեռը ուղարկելու կամ փոխադրամիջոցը փոխադրելու հետ եւ կրում է դրանցից բխող պարտավորությունները: Նման դեպքում յուրաքանչյուր փոխադրող պատասխանատու է ամբողջ ուղերթով փոխադրման համար՝ մինչեւ առաքում:

Հոդված 39

Փոխարինող փոխադրող

1. Եթե փոխադրողը փոխադրման իրականացումը լրիվ կամ մասամբ վստահել է փոխարինող փոխադրողի, անկախ փոխադրման պայմանագրի համաձայն նման իրավունք ունենալուց կամ չունենալուց, այդ փոխադրողը, այնուամենայնիվ, պարտավորված է մնում ամբողջ փոխադրման համար:
2. Սույն Միասնական կանոնների բոլոր դրույթները, որոնցով կարգավորվում է փոխադրողի պարտավորությունը, վերաբերում է նաեւ փոխարինող փոխադրողի պարտավորությանը իր կողմից իրականացված փոխադրման համար: 48-րդ եւ 52-րդ հոդվածները կիրառվում են, եթե հայց է հարուցվել փոխարինող փոխադրողի աշխատակիցների կամ որեւէ այլ անձի դեմ, որի ծառայություններից փոխարինող փոխադրողը օգտվում է փոխադրում իրականացնելիս:

3. Որեւէ հատուկ պայմանագրի համաձայն՝ սույն Միասնական կանոններով չպարտադրված պարտավորությունների ստանձնումը կամ նման պայմանագրի համաձայն սույն Միասնական կանոններով պարտադրված պարտավորություններից ազատումը չի վերաբերում փոխարինող փոխադրողին, եթե նա դրանք հստակ եւ գրավոր չի ընդունել : Անկախ այն բանից՝ փոխարինող փոխադրողն ընդունել է դրանք, թե ոչ, այնուամենայնիվ, փոխադրողը շարունակում է պարտավորություն կրել կամ պարտավորություն ունենալ նման հատուկ պայմանագրից բխող իրավունքներից հրաժարման մասով

4. Երբ եւ եթե փոխադրողն ու փոխարինող փոխադրողը պարտավորություն են կրում, ապա նրանք այդ պարտավորությունը կրում են համապարտ:

5. Փոխադրողի, փոխարինող փոխադրողի եւ նրանց աշխատակիցների, ինչպես նաեւ այլ անձանց կողմից, որոնց ծառայություններից փոխադրում իրականացնելիս օգտվում են փոխադրողը եւ փոխարինող փոխադրողը, վճարվող փոխհատուցման ընդհանուր գումարը չպետք է գերազանցի սույն Միասնական կանոններով սահմանված սահմանաչափերը:

6. Սույն հոդվածը չի սահմանափակում փոխադրողի եւ փոխարինող փոխադրողի միջեւ ռեգրեսիվ հայցով դիմելու իրավունքները:

Հոդված 40

Կորստի կանխավարկածը

1. Առանց լրացուցիչ ապացույց ներկայացնելու իրավասու անձը կարող է համարել ուղեբեռը կորած, եթե այն իրեն չի տրամադրվում կամ իր տրամադրության տակ դրվում իրեն հանձնելու մասին պահանջից 14 օր հետո՝ 22(3) հոդվածի համաձայն:

2. Եթե կորած համարվող ուղեբեռը գտնվում է հանձնման մասին պահանջից հետո մեկ տարվա ընթացքում, ապա փոխադրողը պետք է տեղեկացնի իրավասու անձին, եթե նրա հասցեն հայտնի է կամ կարելի է այն գտնել:

3. 2-րդ պարբերության մեջ նշված ծանուցումն ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում, իրավասու անձը կարող է պահանջել իրեն հանձնել տվյալ ուղեբեռը: Այդ դեպքում նա պարտավոր է վճարել առաքման վայրից մինչեւ հանձնման վայրը ուղեբեռը փոխադրելու հետ կապված ծախսերը եւ հետ վճարել ստացված փոխհատուցումը՝ բացառությամբ, եթե հարկ եղած դեպքում՝ փոխհատուցման մեջ ծախսեր են ներառված եղել: Այնուամենայնիվ,

տվյալ անձը պահպանում է ուղեբեռի հանձնումն ուշացնելու համար փոխհատուցում պահանջելու իր իրավունքները, որոնք սահմանված են 43-րդ հոդվածում:

4. Եթե գտնված ուղեբեռի կտորի համար ոչ ոք պահանջ չի ներկայացնում 3-րդ պարբերության մեջ նշված ժամկետում, կամ եթե այն գտնվել է հանձնման պահանջ ներկայացնելուց հետո մեկ տարուց ավելի ժամկետում, ապա փոխադրողն իրավունք ունի տնօրինելու այն ուղեբեռի գտնման վայրում գործող օրենքների եւ իրավական նորմերի համաձայն:

Հոդված 41

Կորստի դեպքում փոխհատուցում

1. Գրանցված ուղեբեռի լրիվ կամ մասնակի կորստի դեպքում փոխադրողը, թույլ չտալով որեւէ այլ վնաս, պետք է վճարի.

ա) եթե հասցված կորստի կամ վնասի գումարի չափն ապացուցված է՝ այդ գումարի չափին համարժեք փոխհատուցում, որը չպետք է գերազանցի համախառն փոքր զանգվածի մեկ կիլոգրամի համար՝ 80 հաշվարկային միավորը կամ մեկ ուղեբեռի համար՝ 1200 հաշվարկային միավորը.

բ) եթե հասցված կորստի կամ վնասի գումարի չափը սահմանված չէ՝ համախառն փոքր զանգվածի մեկ կիլոգրամի համար՝ 20 հաշվարկային միավորը կամ մեկ ուղեբեռի համար՝ 300 հաշվարկային միավորը:

Ըստ կորած մեկ կիլոգրամի կամ մեկ կտոր ուղեբեռի փոխհատուցում կատարելու մեթոդը սահմանվում է Փոխադրման ընդհանուր պայմաններով:

2. Փոխադրողը, բացի դրանից, պետք է փոխհատուցի ուղեբեռի փոխադրման համար զանձված վճարը եւ այլ գումարներ, որոնք վճարվել են կորած ուղեբեռի փոխադրման հետ կապված, ինչպես նաեւ արդեն վճարված մաքսային տուրքերը եւ ակցիզային հարկերը:

Հոդված 42

Վնասի դեպքում փոխհատուցում

1. Գրանցված ուղեբեռի լրիվ կամ մասնակի վնասի դեպքում փոխադրողը, թույլ չտալով որեւէ այլ վնաս, պետք է կատարի ուղեբեռի արժեքին հասցված կորստին համարժեք փոխհատուցում:

2. Այդ փոխհատուցումը չպետք է գերազանցի՝

ա) եթե ամբողջ ուղեբեռը կորցրել է իր արժեքը վնասի հետեւանքով՝ լրիվ կորստի դեպքում վճարվելիք գումարը.

բ) եթե վնասի հետեւանքով կորել է ուղեբեռի միայն մի մասի արժեքը՝ գումար, որը վճարելի կլինէր, եթե այդ մասը կորած լինէր:

Հոդված 43

Առաքումն ուշացնելու համար փոխհատուցում

1. Գրանցված ուղեբեռի առաքումն ուշացնելու դեպքում փոխադրողը առաքման պահանջ ներկայացնելուց հետո յուրաքանչյուր 24 ժամ տեւողությամբ ժամանակահատվածի համար, բայց առավելագույնը 14 օրվա ընթացքում, պետք է վճարի՝

ա) եթե փոխհատուցման իրավունք ունեցող անձն ապացուցում է, որ առաքումն ուշացնելու հետեւանքով ինքը կորուստ կամ վնաս է կրել՝ այդ կորստի կամ վնասի գումարի չափին համարժեք փոխհատուցում՝ առավելագույնը ուղեբեռի համախառն զանգվածի մեկ կիլոգրամի համար՝ 0.80 հաշվարկային միավորի չափով կամ մեկ ուշացած ուղեբեռի համար՝ 14 հաշվարկային միավորի չափով.

բ) եթե փոխհատուցման իրավունք ունեցող անձը չի ապացուցում, որ առաքման ուշացման հետեւանքով ինքը կորուստ կամ վնաս է կրել՝ ուղեբեռի համախառն զանգվածի մեկ կիլոգրամի համար՝ լիկվիդային վնասի 0.14 հաշվարկային միավորի կամ մեկ ուղեբեռի համար՝ 2.80 հաշվարկային միավորի չափով:

Ըստ կորած մեկ կիլոգրամի կամ մեկ կտոր ուղեբեռի փոխհատուցում կատարելու մեթոդը սահմանվում է Փոխադրման ընդհանուր պայմաններով:

2. Ուղեբեռի լրիվ կորստի դեպքում 41-րդ հոդվածում սահմանված փոխհատուցումից բացի՝ 1-ին պարբերության մեջ սահմանված փոխհատուցումը չի վճարվում:
3. Ուղեբեռի մասնակի կորստի դեպքում 1-ին պարբերության մեջ սահմանված փոխհատուցումը վճարվում է ուղեբեռի այն մասի համար, որը կորած չէ:
4. Առաքումն ուշացնելու հետ չկապված ուղեբեռի վնասի դեպքում 42-րդ հոդվածում սահմանված փոխհատուցումից բացի, հարկ եղած դեպքում, վճարվում է 1-ին պարբերության մեջ սահմանված փոխհատուցումը:
5. Ոչ մի դեպքում 1-ին պարբերության մեջ սահմանված փոխհատուցումը 41-րդ եւ 42-րդ հոդվածների համաձայն վճարված փոխհատուցման հետ միասին չպետք է գերազանցի այն փոխհատուցումը, որը կվճարվեր, եթե ուղեբեռն ընդհանրապես կորած լիներ:

ԲԱԺԻՆ 3

Փոխադրամիջոցներ

Հոդված 44

Ուշացման դեպքում փոխհատուցում

1. Փոխադրողի հետ կապված՝ փոխադրամիջոցի բեռնման կամ առաքման ուշացման դեպքում փոխադրողը պարտավոր է վճարել փոխադրման վճարի գումարը չգերազանցող չափով փոխհատուցում. եթե իրավասու անձն ապացուցում է, որ ուշացման հետեւանքով ինքը կորուստ կամ վնաս է կրել:
2. Եթե փոխադրողի հետ կապված՝ փոխադրամիջոցի բեռնման ուշացման դեպքում, իրավասու անձը նախընտրում է չջարունակել փոխադրման պայմանագիրը, ապա փոխադրման վճարը փոխհատուցվում է նրան ամբողջությամբ: Բացի դրանից՝ իրավասու անձը, եթե նա ապացուցում է, որ ուշացման հետեւանքով իրենց կորուստ կամ վնաս է հասցվել, ապա կարող է փոխադրման վճարը չգերազանցող փոխհատուցում պահանջել :

Հոդված 45

Կորստի դեպքում փոխհատուցում

Փոխադրամիջոցի լրիվ կամ մասնակի կորստի դեպքում, վնասի կամ կորստի համար փոխհատուցման իրավունք ունեցող անձին վճարվող փոխհատուցումը հաշվարկվում է փոխադրամիջոցի սովորական արժեքի հիման վրա: Այն չպետք է գերազանցի 8000 հաշվարկային միավորը: Բեռնված կամ բեռնաթափված կցորդը համարվում է առանձին փոխադրամիջոց:

Հոդված 46

Այլ պարագաների համար պարտավորություն

1. Փոխադրամիջոցի մեջ թողած կամ փոխադրամիջոցին ամրացված՝ տուփերի մեջ տեղադրված պարագաների (օրինակ՝ ուղեբեռ կամ դահուկի տուփեր) համար փոխադրողը պատասխանատու է միայն այն դեպքում, եթե կորուստը կամ վնասը կատարվել է իր մեղքով: Վճարվելիք փոխհատուցման ամբողջ գումարը չպետք է գերազանցի 1400 հաշվարկային միավորը:

2. Փոխադրամիջոցից դուրս տեղադրված պարագաների, ներառյալ 1-ին պարբերության մեջ նշված տուփերի առումով՝ փոխադրողը պատասխանատու է միայն այն դեպքում, եթե ապացուցված է, որ նման կորուստը կամ վնասն առաջացել է փոխադրողի կողմից թույլ տրված գործողության կամ թերացման հետեւանքով, որը նա կատարել է դիտավորյալ կամ անփութության հետեւանքով եւ իմանալով, որ նման կորուստ կամ վնաս կարող էր առաջանալ:

Հոդված 47

Կիրառելի իրավունք

Սույն բաժնի դրույթների համաձայն՝ ուղեբեռի փոխադրմանը վերաբերող՝ 2-րդ բաժնի դրույթները կիրառվում են փոխադրամիջոցների նկատմամբ:

ԳԼՈՒԽ I V

Ընդհանուր դրույթներ

Հոդված 48

Պարտավորության սահմանաչափին հավակնելու իրավունքի կորուստ

Սույն Միասնական կանոններում, ինչպես նաև ազգային իրավունքով սահմանված պարտավորության սահմանաչափերը, որոնց համաձայն փոխհատուցումը ամրագրվում է գումարով, չեն կիրառվում, եթե ապացուցվում է, որ կորուստը կամ վնասն առաջացել է փոխադրողի կողմից թույլ տրված գործողության կամ թերացման հետեւանքով, որը նա կատարել է նման կորուստ կամ վնաս առաջացնելու դիտավորությամբ կամ անփութության հետեւանքով եւ իմանալով, որ նման կորուստ կամ վնաս կարող էր առաջանալ:

Հոդված 49

Տարադրամի փոխանակում եւ տոկոսադրույք

1. Եթե փոխհատուցման հաշվարկման ժամանակ պահանջվում է արտարժույթով արտահայտված գումարը փոխանակել, ապա փոխանակումը կատարվում է տվյալ օրվա համար եւ փոխհատուցման կատարման վայրում կիրառելի տարադրամի փոխանակման դրույքաչափով:
2. Իրավասու անձը կարող է պահանջել տոկոսադրույքի փոխհատուցում, որը հաշվարկվում է տարեկան հինգ տոկոսադրույքով՝ 55-րդ հոդվածում սահմանված պահանջը ներկայացնելու օրվանից կամ, եթե նման պահանջ չի կատարվել՝ այն օրվանից, երբ սկսվել է դատական վարույթը:
3. Այնուամենայնիվ, 27-րդ եւ 28-րդ հոդվածների համաձայն վճարվող փոխհատուցման դեպքում, տոկոսադրույքը կուտակվում է միայն այն օրվանից, երբ փոխհատուցման գումարի հաշվարկման համապատասխան միջոցառումները տեղի են ունենում, եթե այդ օրն ավելի ուշ է, քան պահանջը ներկայացնելը կամ երբ դատական վարույթ է սկսվել:
4. Ուղեբեռի դեպքում տոկոսադրույք վճարվում է, եթե փոխհատուցումը ուղեբեռի գրանցման մեկ վաուչերի համար գերազանցում է 16 հաշվարկային միավորը:

5. Ուղեբեռի դեպքում, եթե իրավասու անձն իրեն հատկացված ողջամիտ ժամկետում փոխադրողին չի ներկայացնում օժանդակ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են՝ ներկայացված պահանջի գումարը փոխհատուցելու համար, ապա տոկոսադրույքը չի կուտակվում հատկացված ժամկետի ավարտի եւ նման փաստաթղթերը փաստացի ներկայացնելու միջեւ ընկած ժամանակահատվածում:

Հոդված 50

Միջուկային պատահարների ժամանակ պարտավորություն

Փոխադրողն ազատվում է պարտավորությունից սույն Միասնական կանոնների համաձայն միջուկայինի պատահարների հետեւանքով հասցված կորստի կամ վնասի համար, եթե միջուկային կայանի օպերատորը կամ նրան փոխարինող մեկ այլ անձ պատասխանատու է այդ կորստի կամ վնասի համար միջուկային էներգիայի ոլորտում պարտավորությունները կարգավորող պետության օրենքների եւ իրավական նորմերի համաձայն:

Հոդված 51

Այն անձինք, որոնց նկատմամբ փոխարինողը պարտավորություն է կրում

Փոխադրողը պարտավորություն է կրում իր աշխատակիցների եւ այլ անձանց առջեւ, որոնց ծառայությունները նա օգտագործում է փոխադրում իրականացնելու համար, երբ այդ աշխատակիցներն ու այլ անձինք գործում են իրենց գործառույթների շրջանակում: Փոխադրումն իրականացնող երկաթուղային ենթակառուցվածքի կառավարիչները համարվում են այնպիսի անձինք, որոնց ծառայություններից փոխադրողը փոխադրում իրականացնելու համար է օգտվում:

Հոդված 52

Այլ գործողություններ

1. Բոլոր դեպքերում, երբ կիրառվում են սույն Միասնական կանոնները, ցանկացած հիմքով ցանկացած հայց կարող է հարուցվել փոխադրողի դեմ իր պարտավորությունների մասով

միայն սույն Միասնական կանոններում սահմանված պայմանների եւ սահմանափակումների շրջանակում:

2. Նույնը վերաբերում է ցանկացած հայցի՝ ընդդեմ աշխատակիցների եւ այլ անձանց, որոնց նկատմամբ փոխադրողը պարտավորություն ունի՝ 51-րդ հոդվածի համաձայն:

ԲԱԺԻՆ V

ՈՒՂԵՎՈՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 53

Պարտավորության հատուկ սկզբունքներ

Ուղեւորը պարտավորություն է կրում փոխադրողի առջեւ ցանկացած կորստի կամ վնասի համար, որը

ա) առաջ է եկել հետեւյալ հոդվածների համաձայն՝ իր պարտավորություններից խուսափելու հետեւանքով՝

1. 10-րդ, 14-րդ եւ 20-րդ հոդվածներ.

2. փոխադրամիջոցների փոխադրման հատուկ դրույթներ, որոնք ներառված են Փոխադրման ընդհանուր պայմաններում, կամ

3. Երկաթուղով վտանգավոր ապրանքների միջազգային փոխադրման մասին կանոնակարգ (ԵՎԱՄՓ), կամ

բ) ծագել են իրենց հետ վերցրած ապրանքների կամ կենդանիների հետեւանքով.

բացառությամբ, եթե ուղեւորն ապացուցում է, որ վնասը կամ կորուստն առաջացել է այնպիսի հանգամանքների հետեւանքով, որոնցից ինքը խուսափել չի կարողացել եւ որոնց հետեւանքներն ինքն անկարող է եղել կանխարգելել՝ չնայած իր կողմից ողջամտորեն ձեռնարկված ջանքերի: Սույն դրույթը չի կիրառվում փոխադրողի պարտավորության նկատմամբ՝ 26-րդ եւ 33(1) հոդվածների համաձայն:

ԲԱԺԻՆ VI

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդված 54

Մասնակի կորստի կամ վնասի հաստատումը

1. Երբ փոխադրողը կասկածում կամ հայտնաբերում է իր տնօրինության տակ տեղափոխվող պարագային (ուղեբեռ, փոխադրամիջոց) հասցված մասնակի կորուստ կամ վնաս, կամ դրա մասին պնդում է իրավասու անձը, ապա փոխադրողը պետք է առանց հապաղման, եւ եթե հնարավոր է՝ իրավասու անձի ներկայությամբ հաշվետվություն կազմի, որտեղ պետք է նշի պարագայի վիճակը՝ ըստ նրան հասցված կորստի կամ վնասի բնույթի եւ, եթե հնարավոր է՝ նշի այդ կորստի կամ վնասի չափը, դրա պատճառները եւ այն տեղի ունենալու ժամանակը:

2. Հաշվետվության մի պատճենն անվճար տրամադրվում է իրավասու անձին:

3. Եթե իրավասու անձը համաձայն չէ հաշվետվության արդյունքների հետ, ապա նաեւ կարող է պահանջել, որ ուղեբեռի կամ փոխադրամիջոցի վիճակը եւ վնասի կամ կորստի պատճառն ու արժեքը սահմանեն կա՛մ փոխադրման պայմանագրի կողմերը, կա՛մ դատարանը, կա՛մ տրիբունալը: Պետք է պահպանվի կորստի կամ վնասի սահմանման՝ պետության օրենքներով եւ իրավական նորմերով կարգավորվող ընթացակարգը:

Հոդված 55

Պահանջներ

1. Ուղեւորների մահվան կամ նրանց հասցված անձնական վնասի դեպքում փոխադրողի պարտավորություններին վերաբերող պահանջները գրավոր ներկայացվում են փոխադրողին, որի դեմ կարող է հայց հարուցվել: Մեկ պայմանագրով կարգավորվող եւ իրար հաջորդող փոխադրողների կողմից իրականացվող փոխադրման դեպքում պահանջները կարող են հասցեագրվել առաջին կամ վերջին փոխադրողին, ինչպես նաեւ այն փոխադրողին, որի՝ փոխադրման պայմանագիր կնքած կենտրոնական գրասենյակը կամ մասնաճյուղը, կամ գործակալությունը գտնվում է այն պետությունում, որի բնակիչ կամ մշտական բնակիչ է ուղեւորը:

2. Փոխադրման պայմանագրի վերաբերյալ այլ պահանջներ պետք է հասցեագրվեն գրավոր 56(2) եւ (3) հոդվածում սահմանված փոխադրողին:

3. Այն փաստաթղթերը, որոնք իրավասու անձը պատշաճ է համարում ներկայացնել պահանջի հետ միասին, պետք է հանձնվեն կա՛մ բնօրինակով, կա՛մ պատճենով, հարկ եղած դեպքում՝ պատճենը պատշաճ կարգով վավերացնելով, եթե փոխադրողը պահանջում է նման վավերացում: Պահանջի բավարարման դեպքում, փոխադրողը կարող է պահանջել իրեն հանձնել տոմսը, ուղեբեռի գրանցման վաուչերը եւ փոխադրման վաուչերը:

Հոդված 56

Փոխադրողներ, որոնց դեմ հայց կարող է հարուցվել

1. Ուղետրի մահվան կամ նրան պատճառած անձնական վնասի համար փոխադրողի պարտավորության հիման վրա հայց կարող է հարուցվել միայն այն փոխադրողի նկատմամբ, որը, 26(5) հոդվածի համաձայն, պարտավորություն է կրում:

2. 4-րդ պարբերության համաձայն՝ փոխադրման պայմանագրի հիման վրա ուղետրների կողմից այլ հայցեր կարող են հարուցվել միայն առաջին փոխադրողի, վերջին փոխադրողի կամ այն փոխադրողի դեմ, որն իրականացրել է փոխադրման այն հատվածը, որի ժամանակ վարույթ սկսելու հիմք ծառայող դեպքը տեղի է ունեցել:

3. Եթե իրար հաջորդող փոխադրողների կողմից իրականացված փոխադրման դեպքում ուղեբեռը կամ փոխադրամիջոցն առաքել պարտավորված փոխադրողի անունն իր համաձայնությամբ նշված է ուղեբեռի գրանցման վաուչերի կամ փոխադրման վաուչերի վրա, ապա, 2-րդ պարբերության համաձայն, հայց կարող է հարուցվել նրա դեմ, նույնիսկ եթե նա չի ստացել ուղեբեռը կամ փոխադրամիջոցը:

4. Փոխադրման պայմանագրի համաձայն վճարված գումարը փոխհատուցելու հայց կարող է հարուցվել այն փոխադրողի դեմ, որը գանձել է գումարը կամ այն փոխադրողի դեմ, որի անունից գումարը գանձվել է:

5. Հայց կարող է հարուցվել 2-րդ եւ 4-րդ պարբերություններում չսահմանված փոխադրողի դեմ, եթե այն հարուցվել է որպես հակահայց կամ եթե բացառություն է կատարվել վարույթում, որը վերաբերում է փոխադրման միեւնույն պայմանագրի հիման վրա հարուցված հիմնական հայցին:

6. Քանի որ սույն Միասնական կանոնները կիրառվում են փոխարինող փոխադրողի նկատմամբ, ուստի հայց կարող է հարուցվել նրա դեմ եւս:

7. Եթե հայցվորը կարող է ընտրություն կատարել մի քանի փոխադրողների միջեւ, նրա ընտրության իրավունքն ավարտվում է այն ժամանակ, երբ նա հայց է հարուցում նրանցից մեկի դեմ. նույնը կիրառվում է նաեւ այն ժամանակ, երբ, հայցվորն ընտրության իրավունք ունի մեկ կամ մի քանի փոխադրողների եւ փոխարինող փոխադրողի միջեւ:

Հոդված 58

Մահվան եւ անձին հասցված վնասի դեպքում հայց ներկայացնելու իրավունքի դադարում

1. Ուղեւորի մահվան կամ նրա անձին հասցված անձնական վնասի դեպքում փոխադրողի պարտավորության հետ կապված՝ իրավասու անձի կողմից հայց հարուցելու իրավունքը դադարում է, եթե ուղեւորի հետ տեղի ունեցած պատահարի մասին իրավասու անձը կորստի կամ վնասի մասին տեղյակ լինելու 12 ամիսների ընթացքում չի ծանուցում փոխադրողներից մեկին, որին, 55(1) հոդվածի համաձայն, պետք է հասցեագրվի հայցը : Եթե իրավասու անձը փոխադրողին բանավոր ծանուցում է պատահարի մասին, ապա փոխադրողը նրան հավաստագիր է տալիս նման բանավոր ծանուցման մասին:

2. Այնուամենայնիվ, հայց ներկայացնելու իրավունքը չի դադարում, եթե

ա) 1-ին պարբերության մեջ սահմանված ժամկետում իրավասու անձը հայցը հասցեագրել է 55(1) հոդվածում սահմանված փոխադրողներից որեւէ մեկին.

բ) 1-ին պարբերության մեջ սահմանված ժամկետում պարտավորություն ունեցող փոխադրողը ուղեւորի հետ կատարված պատահարի մասին մեկ այլ ճանապարհով է իմացել.

գ) պատահարի մասին չի ծանուցվել կամ ուշ է ծանուցվել՝ իրավասու անձի հետ չկապված հանգամանքների հետեւանքով.

դ) իրավասու անձն ապացուցում է, որ պատահարը տեղի է ունեցել փոխադրողի կողմից թույլ տրված սխալի հետեւանքով:

Հոդված 59

Ուղեբեռի փոխադրման հետ կապված հայցը ներկայացնելու իրավունքի դադարում

1. Եթե իրավասու անձն ընդունում է ուղեբեռը, ապա փոխադրողի դեմ փոխադրման պայմանագրից բխող՝ հայց հարուցելու իրավունքները դադարեցվում են այդ ուղեբեռի մասնակի կորստի, վնասի կամ առաքումն ուշացնելու դեպքում:

2. Այնուամենայնիվ, հայց ներկայացնելու իրավունքը չի դադարում՝

ա) մասնակի կորստի կամ վնասի դեպքում, եթե՝

1. կորուստը կամ վնասը սահմանվել է 54-րդ հոդվածի համաձայն՝ նախքան իրավասու անձի կողմից ուղեբեռի ընդունումը.

2. վնասի կամ կորստի սահմանումը, որը պետք է տեղի ունենար 54-րդ հոդվածի համաձայն, չի կատարվել բացառապես փոխադրողի մեղքով.

բ) աննկատելի կորստի կամ վնասի դեպքում, որի գոյությունը նկատվում է իրավասու անձի կողմից ուղեբեռն ստանալուց հետո, եթե նա՝

1. խնդրում է սահմանել կորուստը կամ վնասը՝ 54-րդ հոդվածի համաձայն, այն հայտնաբերելուց անմիջապես հետո եւ ոչ ուշ, քան ուղեբեռն ստանալուց երեք օր հետո, եւ

2. բացի դրանից՝ ապացուցում է, որ կորուստը կամ վնասը տեղի է ունեցել փոխադրողի կողմից ուղեբեռն ստանալու եւ այն հանձնելու միջեւ ընկած ժամանակահատվածում.

գ) առաքումն ուշացնելու դեպքում, եթե իրավասու անձը քսանմեկ օրվա ընթացքում օգտվել է 56(3) հոդվածում սահմանված փոխադրողներից մեկի դեմ իրավունքներից.

դ) եթե իրավասու անձն ապացուցում է, որ կորուստը կամ վնասը տեղի է ունեցել փոխադրողի կողմից թույլ տրված սխալի հետեւանքով:

Հայցերը ներկայացնելու սահմանափակում

1. Ուղեւորի մահվան կամ նրան հասցված անձնական վնասի դեպքում փոխադրողի պարտավորության հիմքով վնասների փոխհատուցման վաղեմության ժամկետը հետեւյալն է՝

ա) ուղեւորի դեպքում՝ պատահարի օրվանից հետո երեք տարի.

բ) այլ իրավասու անձանց դեպքում՝ ուղեւորի մահվան օրվանից հետո՝ երեք տարի եւ պատահարի օրվանից հետո՝ առավելագույնը հինգ տարի:

2. Փոխադրման պայմանագրից բխող այլ հայցերի վաղեմության ժամկետը մեկ տարի է: Այնուամենայնիվ, վաղեմության ժամկետը երկու տարի է, եթե կորուստը կամ վնասն առաջացել է փոխադրողի կողմից թույլ տրված գործողության կամ թերացման հետեւանքով, որը նա կատարել է նման կորուստ կամ վնաս առաջացնելու դիտավորությամբ կամ անփութության հետեւանքով եւ իմանալով, որ նման կորուստ կամ վնաս կարող էր առաջանալ:

3. 2-րդ պարբերության մեջ սահմանված վաղեմության ժամկետը վերաբերում է հետեւյալ հայցերին՝

ա) լրիվ կորստի փոխհատուցման դեպքում՝ 22(3) հոդվածում սահմանված ժամկետի ավարտից հետո տասնչորսերորդ օրը.

բ) մասնակի կորստի, վնասի կամ առաքումն ուշացնելու համար փոխհատուցման դեպքում՝ առաքումը կատարելու օրվանից.

գ) բոլոր մյուս դեպքերում, որոնք ներառում են ուղեւորների փոխադրում՝ տոմսի վավերության ժամկետի ավարտի օրվանից:

Վաղեմության ժամկետի սկիզբը ցույց տվող օրը չի ներառվում այդ ժամկետում:

4. [...]

5. [...]

6. Այլապես, վաղեմության ժամկետի կասեցումը կամ դադարեցումը կարգավորվում է ազգային իրավունքով:

ԲԱԺԻՆ VII

ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 61

Փոխադրման վճարի բաշխում

1. Ցանկացած փոխադրող, որը գանձել կամ գանձած պետք է լինի փոխադրման վճար, պետք է համապատասխան փոխադրողներին վճարի նման վճարի իրենց համապատասխան մասնաբաժինը: Վճարման մեթոդն ամրագրվում է համաձայնագրով փոխադրողների միջև:
2. 6(3) հոդվածը, 16(3) հոդվածը եւ 25-րդ հոդվածը կիրառվում են իրար հաջորդող փոխադրողների միջև հարաբերությունների նկատմամբ:

Հոդված 62

Ռեգրեսիվ հայցով դիմելու իրավունք

1. Փոխադրողը, որը փոխհատուցում է վճարել սույն Միասնական կանոնների համաձայն, փոխադրման մասնակցած այլ փոխադրողների դեմ ռեգրեսիվ հայցով դիմելու իրավունք ունի հետեւյալ դրույթների համաձայն՝
 - ա) այն փոխադրողը, որը պատճառ է եղել կորստի կամ վնասի համար, միակ պատասխանատուն է դրա համար.
 - բ) եթե կորուստը կամ վնասը տեղի է ունեցել մի քանի փոխադրողների մեղքով, նրանցից յուրաքանչյուրը պատասխանատու է վնասի կամ կորստի այն մասի համար, որն առաջացել է իր մեղքով. եթե անհնար է կատարել նման տարբերակում, ապա փոխհատուցումը բաշխվում է նրանց միջև՝ գ) կետի համաձայն.
 - գ) եթե հնարավոր չէ ապացուցել, որ փոխադրողն է կորստի կամ վնասի պատճառ եղել, ապա փոխհատուցումը կիսվում է բոլոր փոխադրողների միջև, որոնք մասնակցել են փոխադրմանը, բացառությամբ այն փոխադրողների, որոնք ապացուցում են, որ կորուստը կամ վնասը տեղի չի ունեցել իրենց մեղքով. նման բաշխումը պետք է համամասնական լինի փոխադրման վճարի իրենց համապատասխան չափաբաժնին:

2. Այդ փոխադրողներից որեւէ մեկի անվճարունակության դեպքում, նրա կողմից վճարվելիք չվճարված մասնաբաժինը բաժանվում է բոլոր մյուս փոխադրողների միջեւ, որոնք մասնակցել են փոխադրմանը՝ ըստ փոխադրման վճարում ունեցած իրենց համապատասխան չափաբաժնի:

Հոդված 63

Ռեգրեսիվ հայցով դիմելու ընթացակարգ

1. 62-րդ հոդվածի համար ռեգրեսիվ հայցով դիմելու իրավունք իրականացնող փոխադրողի կողմից կատարված վճարման վավերությունը չի կարող վիճարկվել այն փոխադրողի կողմից, որի դեմ ռեգրեսիվ հայցով դիմելու իրավունքը իրականացվել է, եթե փոխհատուցումը սահմանվել է դատարանի կամ տրիբունալի կողմից, եւ երբ այդ փոխադրողը, որին պատշաճ կարգով դատական ծանուցում է ներկայացվել, հնարավորություն է ստացել միջամտելու դատական վարույթին: Հիմնական հայցը վարույթ ընդունած դատարանը կամ տրիբունալը սահմանում է այն ժամկետը, որի ընթացքում թույլատրում է վարույթի ծանուցում կատարել կամ միջամտել նման վարույթին:

2. Ռեգրեսիվ հայցով դիմելու իրավունք իրականացնող փոխադրողը մեկ եւ միեւնույն վարույթում ներկայացնում է իր պահանջը բոլոր այն փոխադրողների դեմ, որոնց հետ նա համաձայնություն ձեռք չի բերել: Հակառակ դեպքում նա կկորցնի ռեգրեսիվ հայցով դիմելու իր իրավունքն այն փոխադրողների առումով, որոնց դեմ նա վարույթ չի սկսել:

3. Դատարանը կամ տրիբունալն իր որոշումը կայացնում է մեկ եւ միեւնույն վճռի շրջանակում ռեգրեսիվ հայցով դիմած բոլոր պահանջների առնչությամբ, որոնք ներկայացվել են իրեն:

4. Ռեգրեսիվ հայցով դիմելու իր իրավունքը պաշտպանել ցանկացող փոխադրողը կարող է իր հայցը ներկայացնել այն պետության դատարաններ կամ տրիբունալներ, որի տարածքում է գտնվում փոխադրման մեջ մասնակցած փոխադրողներից մեկի գործունեության իրականացման վայրը կամ մասնաճյուղը, կամ գործակալությունը, որի հետ կազմվել է փոխադրման պայմանագիրը:

5. Եթե հայց պետք է հարուցվի մի քանի փոխադրողների դեմ, հայցվոր փոխադրողն իրավունք ունի ընտրելու 4-րդ պարբերության համաձայն իրավասություն ունեցող դատարաններից կամ տրիբունալներից որեւէ մեկը, որտեղ նա վարույթը կսկսի:

6. Ռեգրեսիվ հայցով դիմելու վարույթը չի կարող միացվել փոխհատուցման վարույթին, որն սկսում է փոխադրման պայմանագրով իրավասու անձը:

Հոդված 64

Ռեգրեսիվ հայցով դիմելու մասին համաձայնագրեր

Փոխադրողները կարող են կազմել համաձայնագրեր, որոնք շեղում են կատարում 61-րդ և 62-րդ հոդվածներից:

20071023

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՏՈՄՍԻ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴԻՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաս I. Ճամփորդությունից առաջ տեղեկություններ

Պայմանագրով ընդհանուր պայմանների կիրառումը

Ամենաարագ ուղեւորության ժամանակացույց եւ պայմաններ

Ամենաէժան ուղեւորության ժամանակացույց եւ պայմաններ

Հաշմանդամություն ունեցող անձանց եւ տեղափոխման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց համար գնացքների վրա հարմարությունների հասանելիություն, դրանցից օգտվելու պայմաններ եւ առկայություն

Հեծանիվների համար հասանելիության եւ դրանք գնացք բարձրացնելու պայմաններ

Ծխելը թույլատրող եւ արգելող, առաջին եւ երկրորդ դասի նստատեղերի, ինչպես նաեւ ննջավագոնների առկայություն

Ցանկացած իրադարձություն, որը կարող է ընդհատել կամ ուշացնել ծառայությունները

Գնացքում ծառայությունների առկայություն

Կորցրած ուղեբեռը պահանջելու ընթացակարգեր

Բողոքները ներկայացնելու կարգ

ՄԱՍ II. Ուղեւորություն ընթացքում տեղեկություններ

Գնացքում ծառայություններ

Հաջորդ կայարան

Ուշացումներ

Ուղեւորությունը շարունակելու ծառայություններ

Անվտանգության եւ ապահովության հարցեր:

20071023

ՀԱՎԵԼՎԱԾ III

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Տեղեկությունների եւ տոմսերի տրամադրում

Ծառայությունների ճշտապահություն եւ ծառայությունների ընդհատումների խնդիրները լուծելու ընդհանուր սկզբունքներ

Ծառայությունների հետաձգում

Շարժակազմի եւ կայարանի հարմարությունների մաքրություն (վագոններում օդի որակը, սանիտարահիգիենիկ հարմարությունների մաքրությունը եւ այլն)

Հաճախորդների գոհունակության մասին ուսումնասիրություն

Բողոքներին ընթացք տալը, ծառայությունների որակի չափանիշները չպահպանելու համար հետվճարում եւ փոխհատուցում

Հաշմանդամություն ունեցող անձանց եւ տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց օժանդակության տրամադրում: